

Պրոֆեսոր Սեբաստիան Բրոքի սույն աշխատանքն անգլերենից թարգմանելու հիմնական նպատակն է որոշակի գաղափար փալ մեր ընթերցողներին ասորագիտության եւ դրա արդի նվաճումների վերաբերյալ: Պրոֆեսոր Բրոքը երկար տարիներ դասավանդել է Օքսֆորդի համալսարանի Արեւելագիտության ինստիտուտում՝ դառնալով Ի. դարի երկրորդ կեսի ամենահմուտ եւ բանիմաց ասորագետներից մեկը: Նրա ուսումնասիրության հիմնական ոլորտները ներառում են ասորական տարբեր բնագրերի հրատարակումն ու թարգմանությունը, հույն-ասորական գրական-մշակութային հարաբերությունների լուսաբանումը եւ: Սույն աշխատությունը, ինչպես արդեն նշված է առաջաբանում, ասորագիտությանը նվիրված մի համառոտ ներածություն է. այն նախատեսված է ասորագիտությամբ եւ ընդհանրապես հումանիտար առարկաներով զբաղվող ուսանողների ու մասնագետների համար:

Խմբագրություն

ՍԵԲԱՍՏԻԱՆ ԲՐՈՔ

ԱՍՈՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՒ ԱՍՈՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՅԻՆԵՐ¹

(Պարմարանասիրական ուրվագիծ)

Մաս Ա.

1. Ասորերենի գործնական կիրառումը. Լոնդոնի Նարավային Իլինգի մերքոյի կայարանից հինգ թույն զբոսնելով՝ կհայրնվեք «Ասորական Տան» մոտ, որտեղ յուրաքանչյուր կիրակի ասորերենով Արեւելքի Եկեղեցու Ս. Պատարագն է մատուցվում: Այցելուին ասվող առաջին նախադասությունն այն է, որ ասորերենն արամեերենի մի բարբառ է, Ա. դարում Պաղեստինում Քրիստոսի

¹ Սույն հոդվածի կրկնօրինակումը կարարվել է Բիրմինգհեմի համալսարանի Ասորական-բանության ֆակուլտետի արդյունությամբ (J. H. Eaton, Horizons in Semitic Studies: Articles for the Student, University Semitics Study Aids 8, Birmingham: Dept. of Theology, University of Birmingham, 1980): Բուն հատրոփ էջերը տրված են անկյունավոր փակագծերում: Հոդվածի վերախմբագրված ու լրացված տարբերակի հրատարակումը նախատեսված է հեղինակի կողմից: Միևնույն ժամանակ առավել նոր գրականության ցանկ կարելի է գտնել Թ. Մուրաոկայի գրքում (T. Muraoka, Classical Syriac: A Basic Grammar with a Chrestomathy {With a select bibliography compiled by Sebastian Brock}, Porta linguarum orientalium, Neue Serie 19, Wiesbaden: Harrassowitz, 1997): Բացի այդ, հավելյալ գրականության ցանկ առկա է նաեւ Սեբաստիան Պ. Բրոքի կազմած մատենագիտության մեջ (Sebastian P. Brock, Syriac Studies: A Classified Bibliography (1960-1990), Kaslik: {Université Saint-Esprit de Kaslik}, 1996):

կողմից գործածված լեզու՝ մի իրողություն, որով այս Եկեղեցու անդամները շարք հաարք են:

Ասորերենը, այսպիսով, որպես ծիսական լեզու, շարունակում է օգտագործվել Արևելյան երկու Եկեղեցիների՝ Արևելքի Ասորական Եկեղեցու (Արևմտյան քրիստոնյաներին ավելի շար «Նեստորական» եկեղեցի անվամբ հայրնի) և Ասորի Ուղղափառ Եկեղեցու (Արևմտյան քրիստոնյաներին ավելի շար «Նա-կորիկյան» կամ «Մոնոֆիզիկ» եկեղեցի անվամբ հայրնի)² կողմից: Առավել պակաս չափով ասորերենը կիրառվում է նաև Մարոնիք Եկեղեցու Ս. Պապա-րագի ընթացքում, չնայած որ վերջին փասնամյակներում այսպիսի արաբերեն ասորերենի համեմար գգալի առավելության է հասել:

Սակայն դասական ասորերենը միայն ծիսական «մեռած» լեզու չէ. որպես գրական լեզու՝ այն դեռ կիրառվում է հարկապես ուղղափառ ասորիների կողմից, իսկ որոշ շրջաններում դրանով նույնիսկ խոսում են (այն սովորական հաղորդակցության լեզու է, օրինակ, Թ-ուր Արդինում գրվող Մար Գաբրիելի ասորի ուղղափառ վանական դպրոցում Թ-ուրքիայի հարավարևելյան մասում: Այսպիսի երեխաներ են ընդունում նաև արաբախոս, թրքախոս, քրդախոս կամ արդի ասորերեն (Turoyo-Թ-ուրոյո) լեզվով խոսող միջավայրերից): Ներկա դարում եվրոպական մի քանի գրական սրեղծագործություններ, այդ թվում՝ Վիլյամ Շեքսպիրի «Վենետիկի Վաճառական»-ը ու Չարլզ Դիկենսի «Երկու քաղաք-ների մասին պարումը», թարգմանվել են ասորերեն:

2. Ուսումնասիրության նպատակը. Սակայն, ինչպես որ մարդիկ երբայեցերեն չեն սովորում Գյոթեի «Փառսարի» երբայեցերեն թարգմանությունն ընթերցելու համար, այնպես էլ ոչ ոք ասորերեն չի սովորում Դիկենս կարդալու նպատակով, ոչ էլ որեւէ մեկն այսօր, ամենայն հավանականությամբ, այն օգտա-կար է համարում (ինչպես Ս. Շիլարիոսն էր անում համաձայն իր կենսագիր Նե-րոնիմոսի)՝ Բակարիայի կարաղած ուղտերին սանձելու համար: Այնուամենայ-նիվ, այլ պարճառներ էլ կան, քանի որ բուն ասորական գրականության, ինչպես նաև Բ. դարից մինչ ներկա օրերն ասորերենից հունարեն և այլ լեզուներով կա-րարված թարգմանությունների լայնածավալ դաշտ է առկա: Այս գրականութ-յան լավագույն մասն սրեղծվել է իսլամի ի հայր գալուց 300-400 րարի առաջ, մեկ-երկու բացառությամբ, «ոսկեդարյան» այս գրականությունն է, որ գրավել է արևմտյան գիտնականների ուշադրությունը: Նարկ է, ուրեմն, անդրադառնալ հերաբրքություն առաջ բերած այդ մի քանի ոլորտներին:

² Խորին եզրույթների բացարրության համար րեն Ասորալեզու եկեղեցիների հավելված:

ա) Սուրբգրային ուսումնասիրություններ. Ասորերենի ուսուցումը վաղուց արդեն ընկալվում է իբրև սուրբգրային ուսումնասիրությունների կարևոր կցորդ: Ասորերեն Նոր Կրակարանն առաջին անգամ հրատարակվել է 1555-ին (ասորերեն քերականության երոպական առաջին փայլագրումը՝ 1539-ին), իսկ ասորերեն Նին և Նոր Կրակարանների վերջնական փարբերակը՝ Պեշիթթա անվամբ հայտնի, այլ հնագույն փարբերակների կողքին զերեղված է ԺԷ. դարում Փարիզում և Լոնդոնում հրատարակված բազմալեզու Ասրվածաշնչերում:

Նին Կրակարանի գրքերն ուղղակիորեն եբրայերենից են թարգմանվել՝ անկասկած փարբեր ժամանակներում և փարբեր միջավայրերում: Ապշեցուցիչն այն է, որ Ասորական Ավանդությունը սուրբգրային իր փարբերակների սկզբնաղբյուրների թվաքանակ չի պահպանել, ինչպես օրինակ, Արիստեսի նամակում՝ Սեպտուագինյայի պարագային: Որոշ գրքեր, մասնավորապես Ննգամարյանի գրքերը, սերտորեն կապված են արամեերեն Թարգումի հետ, սակայն այժմ ընդհանուր կարծիք կա, որ Պեշիթթայի և Թարգումի այս գրքերի միջև որոշ փոսակի ուղիղ գրական հարաբերակցություն պետք է եղած լինի, չնայած որ դրա ճշգրիտ բնույթը ցայժմ անորոշ է: Միայն Մակարայեցիների գրքում է, որ այդ հարաբերակցությունը բավականին ուշագրավ է, հակադիր, քանի որ վերջինիս թարգմանյան փոքսոփից պարզ է, որ այն, անկասկած, Պեշիթթայից է թարգմանվել, քան հակառակը:

Քանի որ Նին Կրակարանի գրքերի ասորերեն հնագույն թարգմանությունները, հավանաբար, առաջին դարում եբրայական փոքսոփի հստակեցման ժամանակաշրջանին են պատկանում, հետևաբար Պեշիթթայի Նին Կրակարանը, ի փարբերություն Սեպտուագինյայի, եբրայերեն Սուրբ Գրքի փոքսոփաբանական քննադատության փոսանկյունից առավել քիչ հետաքրքրություն է ներկայացնում, չնայած որ այն, այնուամենայնիվ, մի շարք հետաքրքիր ընթերցումներ է պարունակում, որոնք ներկայացված են եբրայական Ասրվածաշունչ (Biblia Hebraica) և եբրայական Սուրբ Գրքի Շտուտգարտենսիա (Biblia Hebraica Stuttgartensia) ժողովածուներում:

Բացի Նին Կրակարանի ընդունված փարբերակից՝ Պեշիթթայից, առկա է նաև մոտավորապես 615 թ. Ալեքսանդրիայում հունարենից կադարված մեկ այլ թարգմանություն: Պողոս Թեկլացու (կամ Թեկլմահրացու) կողմից կադարված և «Syro-Hexapla» («Վեցիջանի» ասորերեն թարգմանություն) անունով հայտնի այս թարգմանությունը Որոգինեսի՝ Սեպտուագինյայի փոքսոփի «Վեցիջան» խմբագրության շար փառացի թարգմանությունն է՝ իր քննադատական նշաններով (աստերիքներ՝ աստղանիշեր և օրելիքսներ) և Ակյուղասից, Թեոդոփիոնից, Սյումաքոսից վերցված ու լուսանցքներում զերեղված բազմաթիվ ընթերցվածներով հանդերձ: Բայց քանի որ Որոգինեսի «Hexapla»-ից հունարեն մի

փոքր հափված է պահպանվել, հերեոսաբար «Syro-Hexapla»-ն սկզբնաղբյուրի կարևորություն է ներկայացնում Սևափուագինոսի ուսումնասիրման փաստականության, չնայած որ այն մեզ ամբողջությամբ չի հասել:

Ներաբրբիր է, որ ասորերեն թարգմանական պարմության մեջ (թե՛ սուրբգրային, թե՛ ոչ աստվածաշնչային փեսքեր) շարունակական զարգացում կա ազափ ոճից դեպի գրականը. մի գործընթաց, որն իր զագաթնակերին է հասել է. դարում:

Ասորերեն Նոր Կրակարանի մի քանի փարբերակներ կան, որոնցից հնագույնը՝ թվագրված Բ. դարի 2-րդ կեսով, հավանաբար Տափաանոսի «Դիափեսարոնը» կամ չորս Ավերարանների միախառնումն է (հեղինակը, ըստ երևույթին, այլ աղբյուրներ էլ է օգտագործել): Այս աշխարանքը մեծ հեղինակություն է վայելել Ասորական վաղ Եկեղեցում (պարզ չէ՝ սկզբնապես այն հունարեն, թե՛ ասորերեն է գրվել), սակայն հերագայում այն արգելվել է, ինչի արդյունքում ասորերեն ամբողջական փեսքը չի պահպանվել. [բնագրի] ամենամոփ փարբերակը մեզ է հասել Ս. Եփրեմ Ասորու «Մեկնությամբ»: Թեև քիչ բան է հայրնի «Դիափեսարոնի» նախնական բնագրի մասին, այնուամենայնիվ, վերջինս լայն ազդեցություն է փարածում է ունեցել. այդ են վկայում պարսկերեն և արաբերեն, ինչպես նաև գերմաներեն, հոլանդերեն, իտալերեն և անգլերեն լեզուներով պահպանված միջնադարյան քաղվածքները:

Ասորերեն ավերարանական ամենավաղ փեսքը, որը հայրնի է հին ասորերեն թարգմանությամբ, պահպանվել է երկու շափ հին Curetoniensis (Կուրեփոնյան, Բրիտանական Թանգարան) և Sinaiticus կամ Սինայական (Սինա լեռան վրա գրվող Ս. Կափարինի վանք) ձեռագրերում: «Արեւմտյան» մի շարք թարգմանություններում այն փեսքաբանական առումով մեծ հերաբրբություն է ներկայացնում: Վերջինս, հին լափիներենի հեր միասին, հունարեն Ավերարանների հնագույն պահպանված թարգմանությունն է: Նավանական է, որ հին ասորերեն թարգմանությունն ընդգրկել է ասորերեն Նոր Կրակարանի ողջ կանոնը (ներառյալ նաև Նայրնության, Բ. Պերրոսի, Բ. և Գ. Նովհաննեսի, Նուդայի գրքերը), սակայն բացի Ավերարաններից՝ պահպանվել են նաև քաղվածքներ [նորկրակարանյան] մյուս գրքերից:

Նոր Կրակարանի ընդունված փարբերակը՝ Պեշիթթան, հին ասորերեն թարգմանության վերանայումն է, որը, հավանաբար, ավարտվել է Ե. դարի սկզբում: Վերանայման այդ գործընթացը երբեմն կապում են Եղեսիայի Ռաբբուլաս եպիսկոպոսի անվան հեր, որը, սակայն, հեռու է ճշմարտությունից: Վերանայված փեսքի դասավորվածությունն ակնհայտորեն և շափ արդյունավոր կերպով ցույց է փալիս Պեշիթթայի ձեռագրերի (որոնցից մի քանիսը թվագրվում են մինչև ուշ Ե. դար) միջև եղած աննշան փոքր փարբերությունները:

Դեռևս Ջ. դարասկզբին Պեշիթթան հունարեն բնօրինակի հետ համադրվել է ասորի ուղղափառ ասորվածաբան, Մարուգի եպիսկոպոս Փիլոքսենոսի գլխավորությամբ, ով «Նեստորական» մեկնության չափազանց ազատ ու փրկավորիչ որոշ հարվածներ է գրել Պեշիթթայում (մասնավորապես Մարթ. Ա. 1, Առ Եբրայեցիս Ե. 7, Ժ. 5 հարվածներում): «Փիլոքսենյան» անվամբ հայրնի նրա փարբերակը (չնայած որ, անկասկած, Պողիկարպոս քորեպիսկոպոսն է իրականում կարարել ողջ աշխարանքը), իր նախնական ձեռով չի պահպանվել, բայց մեկ դար անց՝ 615 թ., Ալեքսանդրիայում հիմք է հանդիսացել Թովմաս Նրակլեացու կողմից կարարված մեկ այլ վերամշակման համար: Թովմասի աշխարանքը՝ հայրնի «Նարկլյան» անվամբ, պահպանվել է մի շարք ձեռագրերում (Է. եւ Ը. դարեր) եւ, նրան ժամանակակից Պողոս Թեյլլացու «Syro-Hexapla»-ի հետ միասին փառացի թարգմանական մեթոդի պարճառով իմաստային խեղաթյուրման գազաթնակերն են հանդիսանում: Այդուամենայնիվ, հունարեն բնագրի յուրաքանչյուր մասնիկ արտացոլված է, որը մեծապես հեշտացնում է դրանց հիմքում ընկած հունարեն փեքսրի վերականգնմամբ հեփաթրոփող փեքսուրան-բննադարի աշխարանքը:

Ասորերեն Նորկարարանյան փարբերակների մի հիանալի ուսումնասիրություն առկա է Բ. Մ. Մեցգերի «Նոր Կրակարանի հնագույն փարբերակները» (B. M. Metzger, *The Early Versions of the New Testament*, Oxford, 1977) աշխատության առաջին գլխում, մինչ Նին Կրակարանի լավագույն ընդհանուր դիփարկումը ներկայացված է Ս. վան Պույվելդեի «Սուրբ Գրոց բառարանում» (C. van Puyvelde, *Dictionaire de la Bible, Supplement VI*, 1960, 834 f.):

բ) Նայրաբանական ուսումնասիրություններ. Եկեղեցական հայրերի շարք մեծ թվով աշխատություններ են թարգմանվել ասորերեն, երբեմն նույնիսկ մի քանի անգամ: Պահպանված հնագույն թարգմանությունները Եվսեբիոսի որոշ աշխատություններն են՝ ներառյալ «Ասորվածահայրությունը», որի հունարեն բնագիրը չի պահպանվել. դրանք բոլորն էլ մեզ են հասել Ե. դարի ձեռագրերով: Նունարեն փեքսրերի թարգմանության գործընթացը մեծ եռանդով շարունակվեց մինչև Է. դարավերջ, երբ արաբական արշավանքներն Ասորական Եկեղեցիներին զգալի կերպով հեռացրեցին հունական մշակույթի հետ ունեցած սերտ կապերից:

Նույն Եկեղեցու հայրերի ասորերեն թարգմանությունները կրկնակի հեփաթրոփություն են ներկայացնում: Ի փարբերություն հունարեն բնագրերով փրկված աշխատություններին՝ ասորերեն բնագրերը ոչ միայն մի քանի դարով նախորդում են հունարեն ձեռագրերին, այլև իրենք են պահպանվել մեծաթվեր {4} հնություն ունեցող ձեռագրերում (Ջ. դարի ձեռագրերը եզակի են): Առավել եւս կարևոր են հունարեն այն աշխատությունները, որոնք պահպանվել են աստ-

րերեն թարգմանությամբ. բացի Եվսեբիոսի «Աստվածահայրություն» աշխատությունից, սրանցում ընդգրկված են նաև Նիպատլիպոսին և Գրիգոր Սբանչելագործին վերագրվող երկերը, Աթանասի փոնախոսական թղթերը, Թեոդորոս Մոփսուեստացու «Նովիանոս մեկնությունը», Կյուրել Ալեքսանդրացու «Ղուկասոս մեկնությունը» և Եւագր Պոնտացուն վերագրվող մի շարք աշխատություններ: Ասորերեն թարգմանությամբ նաև մի քանի հույն հակաբաղկեղծական աստվածաբանների գրվածքներ են պահպանվել, որոնց հունական տարբերակներն արգելված են եղել և այլ տարբերակներով մեզ չեն հասել. այս կարգի թարգմանություններում առավել ուշագրավ են Անտիոքի պատրիարք Սևերիոսի (512-518 թթ.) մեծածավալ աշխատությունները:

գ) Ծիսագիտական ուսումնասիրություններ. Ծեսի պատմությամբ հետաքրքրվողների համար ասորալեզու գրականությունը չափազանց մեծ արժեք է ներկայացնում: Վաղ շրջանի քրիստոնեական գրականության ամենաստեղծարար և բեղմնավոր ոլորտի լավագույն վկայությունն Ասորապաղեստինյան շրջանն է և, ի վերջո, հենց այստեղ էր, որ բյուզանդական ծեսը համալրվեց Ս. Նովիանոս Բսկեբերանի, Ս. Բարսեղի և Ս. Նակորի հեղինակած սրբազան պատարագներով. այս տարածաշրջանում ծաղկում է ապրել նաև հունալեզու և ասորալեզու ծիսական պոեզիան: Ս. Ադոյայի և Ս. Մարիի Արևելաասորական պատարագները պարբերաբար ցայծմ կիրառվող ամենահին պատարագներն են, մինչդեռ Արևմտաասորական ավանդության մեջ պատարագների ապշեցուցիչ տարբերակներ են ստեղծվել, որոնցից ավելի քան 70-ը հասել են մեզ, իսկ դրանցից 12-ը կամ ավելին ցայսօր օգտագործվում են: Նամենաբական ծիսագիտություն ուսումնասիրող ուսանողների համար յուրահատուկ կարևորություն է ներկայացնում Արևելաասորական ավանդության Ս. Մկրտության խորհրդի ծիսակարգը, որտեղ ջրի ընկղմանը յուրով օժման կարգն է հաջորդում, որն, ակնհայտորեն, ձևավորվել է թլփաբման և նորադարձի ընծայման հրեական ծիսակարգի հիման վրա: Անտիոքյան ծիսական ավանդույթն այլ տարածաշրջանների փորձառությունների հետ համապեղելուց հետո միայն՝ 400 թվականին, օժման կարգը ներմուծվեց մկրտության խորհրդի մեջ: Ասորական մի շարք եկեղեցիներում օգտագործվող բազմաթիվ ծիսական գրքերի բովանդակության քննադատական ուսումնասիրությունը դեռևս «երիտասարդ» գիտություն է: Այս առումով հույժ կարևոր են Ա. Բաումշտարկի (ասորական ծեսն ուսումնասիրող ռաիվիթաներից մեկը) «Նամենաբական ծիսագիտություն» (անգլերեն թարգմանություն՝ **A. Baumstark**, *Comparative Liturgy*, english translation: London, 1958) աշխատության հավելվածում և Ժ. Մ. Սոգեյի ուսումնասիրության մեջ (**J. M. Sauget**, *Bibliographie des liturgies orientales*, 1900-60, Rome, 1962) գեղեցիկապես գրականության ցանկերը:

դ) Վաղ Ասորական Բրիստոնություն. Թեև ասորերենի հանդեպ ի հայտ եկած հերաբրքությունն այսքան խորությամբ քննարկվեց՝ որպես ուսումնասիրման ավելի լայն ոլորտների հավելված, այնուամենայնիվ, ասորական գրականությունն արժեքավոր է նաև իր սեփական սրեղծագործություններով: Մենք այսպեղ կարող ենք երկու բացառիկ ոլորտ մարնանշել՝ վաղ ասորական գրականությունը՝ որպես բուն սեմական քրիստոնեության պահպանված ներկայացուցիչ, և կրոնական պոեզիան՝ ժանր, որում ասորի հեղինակներն անգերազանցելի են:

Ամենավաղ շրջանի՝ Դ. դարի մեծագույն և անվանապես հայրնի հեղինակներն Ափրահայն ու Եփրեմն են, որոնք, ըստ էության, չեն ազդվել հունական մշակույթից և մեզ իրապես սեմական քրիստոնեության միջավայրն են մատուցում՝ շար առումներով փոքր-ինչ փարբեր Միջերկրայքի հունախոս և լապինախոս երկրների քրիստոնեությունից: Ե. դարից սկսած {5}, ասորախոս եկեղեցիներն արագորեն հելլենիզացման են ենթարկվել, ինչի արդյունքում հերազա հեղինակներն այս կամ այլ ժանրերում ամբողջովին չեն ձերբագարվել հունական մշակույթի ազդեցությունից: Այսպիսով՝ այս երկու հեղինակների՝ Ափրահայի և Եփրեմի գրական ժառանգության վրա հիմնվելով է միայն հնարավոր այս երեւույթի կանոնավոր ուսումնասիրումը: Վաղ ասորական գրականության այս առանձնահատուկ փեսանկյունը զարմանալիորեն անուշադրության է մարնվել, հակառակ նախնական քրիստոնեության ամբողջական պարկերի վերհանման հանդեպ գիտնականների ցուցաբերած հերաբրքությանը. Նորկրակարանյան ուսումնասիրությունների առումով նույնը կարելի է ասել նաև Ռաբբունական գրականության մասին:

Ասորի հեղինակներն ըստ էության չեն ազդվել հունական, հերեւաբար և Եվրոպական մշակույթից, այս առումով ասորական մշակույթը բացառիկ հերաբրքություն է ներկայացնում նաև Ասիական և Աֆրիկյան եկեղեցիների համար, որոնք, Եվրոպայի քրիստոնեական մշակույթի բազմաթիվ փարբերից ձերբագարվելու նպարակով, իրենց ավելի շուր հարագար են համարում ոչ թե հունական, այլ սեմական մրածելակերպը:

Տիպաբանության և խորհրդաբանական (սիմվոլիկ) ասարվածաբանության հիանալի ու քաջալերիչ մի ներածություն կարելի է համարել Ռ. Մյուրրեի մենագրությունը (**R. Murray, Symbols of Church and Kingdom, Cambridge, 1975**):

ե) Ասորական պոեզիա. Ասորական գրականությունը բազմաթիվ բանասարեղծներ է փվել (և դեռ շարունակում է փալ), սակայն նրանցից հարկապես Եփրեմ Ասորին, ով մահացել է 373 թ. Եդեսիայում, որպես իրական յուրօրինակություն և հոգետը ներըմբռնման բանասարեղծ՝ անգերազանցելի է իր բարձրությամբ: Նրա մադրաշները կամ հիմները, հակառակ Ֆ. Բ. Բուրկիփրի նման

մեկ կամ երկու նշանավոր ասորագետների նսեմացուցիչ քննադատության, կարող են իրավամբ համաշխարհային կրոնական պոեզիայում իրենց արժանի տեղը գրավել: Եփրեմի քնարական պոեզիան հագեցած է պարադոքսով և հիացմունքով, ինչպես նաև փիլաբանական մեկնության պարկերավոր վեհ կիրառմամբ: Խորհրդաբանության նրա բարդ տեսությունը, իբրև Paul Ricoeur-ի փիլիսոփայական հիմնական դիրքորոշման նախահիմք է բնութագրվել: Դժբախտաբար նրա աշխատությունների մի փոքր մասն է միայն հասանելի անգլերեն թարգմանությամբ³: Ասորական բանաստեղծական ոճի հիմքում ընկած են երկու հիմնական կատեգորիաներ՝ հանգավորված (սրանգայիկ) և ոչ հանգավորված (ոչ սրանգայիկ) չափածո տաղեր. առաջինը հայրնի է մադրաշա (madrascha) ընդհանուր անվամբ, իսկ երկրորդը՝ մեմրա (memra) անվամբ: Մադրաշաները, անկասկած, երգվել են և նույնիսկ մեղեդիների անուններն են պահպանվել, բայց երաժշտությունն ինքնին՝ ոչ: Յուրաքանչյուր տուն պարունակում է իրեն կցված կրկներգ, իսկ Եփրեմը (ում հանճարեղ գրվածքները կնոջ նկատմամբ մեծ քնքշանք ու հոգաբարություն են արտահայտում) նշել է, որ կրկներգերի կարարումը կանանց երգչախմբի համար է նախատեսված: Յուրաքանչյուր մադրաշա վանկային համաչափ տետրոնիայան սկզբունքներով շարադրված իրեն հափուկ կառուցվածք ունի, որտեղ հիմնական միավորները 4-րդ, 5-րդ, 6-րդ կամ 7-րդ վանկախմբերն են: Եփրեմը մոտ 50 տարբեր սրանգայիկ՝ պարզ և չափազանց բարդ կառուցվածքներ է կիրառել (4 տող՝ յուրաքանչյուրի մեջ 4-ական վանկեր):

{6} Մեմրաները կամ չափածո քարոզները, հավանաբար, ավելի շարարտասանվել են, քան երգվել, և համաչափ վանկավորվածությամբ երկտող բանաստեղծություններից (կուպլետներից) են կազմված: Բացառիկ մեմրաներում կուպլետները կարող են 5+5, 6+6, 7+7 կամ 12+12 վանկերից բաղկացած լինել (օրինակ, 12+12 վանկային կառուցվածքներում 4-րդ և 8-րդ վանկերից հետո դադար կա): 5+5 վանկային կառուցվածքներն ավանդաբար կապված են Բալայի (Ե. դար), 7+7-ը՝ Եփրեմի, իսկ 12+12-ը՝ Նակոբ Սրճեցու (†521թ.) անունների հետ:

Գործնականում, անկասկած, մադրաշաների լավագույն կիրառողը Եփրեմն է, սակայն ավելի ուշ շրջանի հեղինակների մոտ նույնպես մի քանի հիանալի կտորներ կան, որոնց մեջ Սիմեոն Պոլեռացու կողմից (Ե.-Չ. դարեր) գրված պոեմների մի փոքրիկ խումբ արժանի է հափուկ ուշադրության: Մեմրայի մի ձև

3 Բազմաթիվ հարվածներ կարելի է գրել Ռ. Մյուրրեի գրքում, իսկ 12 պոեմների ընտրանին՝ համառոտ ներածականով հանդերձ, ներկայացված է իմ «Սուրբ Նոգու քնար. Ս. Եփրեմի պատերազմային պոեմները» աշխատության մեջ (Sebastian P. Brock, *The Harp of the Spirit: Twelve poems of St. Ephrem, Sobornost 4*, London, 1975): Ս. Եփրեմ Ասորու խորհրդաբանության տեսության մասին Ռ. Մյուրրեի կողմից գրված կարևոր մի ներածական կա տպագրված «Արևելքի խոսք» (*Parole de l'Orient*, 6/7, 1975/76) պարբերականում:

հայրնաբերվել է ասորական պոզիայի ամենահին օրինակներից մեկում՝ Թովմաս առաքյալի «Գործքում» պահպանված գնոսրիկյան բնույթի «Նոգու օրհներգում» (6+6 վանկային կառուցվածք): Եփրեմի մոտ իրականի և անիրականի միջև սահմանագիծը հարկապես դժվար է որոշել նրան վերագրված մեմբրաների պարագային (7+7 վանկային կառուցվածք):

Մեմբրաները լայնորեն կիրառել են ավելի ուշ շրջանի հայրնի հեղինակներից՝ Մծբինի Արևելյան Ասորական Եկեղեցու ասրվածաբանական դպրոցի հայրնի ղեկավար Նարսայը (Ե. դար), Արևմտյան Ասորական Եկեղեցու ասրվածաբան Նակոր Սրճեցին և երեք Իսահակները (բոլորն էլ Ե.-Ջ. դարեր):

Համաձայն Ե. դարի եկեղեցական պարմիչ Սոգոմնուսի՝ Բարդայժանի (Բարդեզանես) որդին Հարմոնիոսն էր՝ «Արամեացիների փիլիսոփան», որը «խորապես փեղյակ լինելով հունական ուսմանը՝ առաջինն էր, որ մայրենի լեզուն՝ ասորերենը, չափանիշների և օրենքների ենթարկեց»: Բանի որ Բարդայժանը մահացել է 222 թ., ուստի նրա որդի Հարմոնիոսը (եթե նա լիովին հնարված կերպար չէ) ակտիվ գործունեություն է ծավալել Գ. դարի սկզբին: Փաստացի ապացույցների քննումը, այնուամենայնիվ, ցույց է տալիս, որ կարծիքը, թե ասորերենի չափածո ձևը հիմնված է եղել հունական փաղաջափության հիման վրա, ամբողջովին սխալ է. դասական հունական պոեզիան քանակական կառուցվածք է ունեցել, մինչդեռ ասորականը միշտ վանկային է: Մենք, ակնհայտորեն, հունական ազգայնամոլության մի դրսևորման հետ գործ ունենք, որը նախընտրում է «բարբարոս» ասորական մշակույթում սրբեղծված լավագույն սրբեղծագործությունները, ինչպես, օրինակ, Եփրեմ Ասորու պոեզիան, որն արդեն Սոգոմնուսի օրերին հունարեն էր թարգմանվել, ի վերջո հունական քաղաքակրթության ածանցում համարել: Իրականում ավելի քան հավանական է, որ փոխազդեցությունն այլ տեսակ է եղել, և որ ասորական մադրաշան է ոգեշնչման աղբյուր հանդիսացել Ե.-Ջ. դարերում զարգացված «Կոնստանտին» անվամբ հայրնի բյուզանդական համաչափ վանկային օրհներգերի համար: Դրանց հեղինակների մեծ մասն Ասորիքից և Պաղեստինից են, իսկ «Կոնստանտինի» մեծագույն ներկայացուցիչ Ռոմանոս Երզնցողն Ասորիքի Նոմս քաղաքից (խոսակցական հիմնական լեզուներն էին հունարենը և ասորերենը) է սերել, որտեղ եկեղեցիներում նա կարող էր լսած լինել Եփրեմի մադրաշաների կանոնավոր երգեցողությունը: Ամեն դեպքում Թեոդորոս Մոփսուեսպացու (†428 թ.) և այլոց վկայություններից պարզ է դառնում, որ ասորերեն կրոնական պոեզիան հունարեն է թարգմանվել՝ հունախոս համայնքներում կիրառելու նպատակով:

զ) Ասորերենն իբրև կամբջող մշակույթ. Շարերին հայրնի է, որ հունական փիլիսոփայության ձեռքբերումները միջնադարյան Արևմուտք են հասել արաբերենի, ինչպես նաև իսլամ ազգաբնակչության՝ դեպի Իսլամիա կարա-

րած ճանապարհորդությունների միջոցով: Ցայժմ փարածված ու չընկալված իրողությունն այն է, որ հունական փիլիսոփայությունը, բժշկությունն ու գիտությունն արաբական միջավայր ուղղակի կերպով չեն թափանցել, այլ, որպես կանոն, եկել են ասորերենի միջոցով: Արիստոտելի և այլոց աշխատությունների ասորերեն թարգմանությունները կատարվել են Ե. դարում, սակայն փոխադրման այս գործընթացը փնտի է ունեցել միայն Թ. դարում՝ Աբասյանների մայրաքաղաք Բաղդադում բնակվող քրիստոնյա ասորիների հիմնարար աշխատությունների շնորհիվ: Այս թարգմանիչներից ամենահայտնին {7} Հունեին իբն Իշաքն է (†873 թ.), ով հեղափոխական փոփոխություններ է հաղորդում կատարված աշխատանքի ընթացքի մասին: Ի մի հավաքելով իր գրած լավագույն և ամենահին հունարեն ձեռագրերը՝ նա դրանք հունարենից ասորերեն, իսկ հետո միայն ասորերենից արաբերեն է թարգմանել: Առաջին հայացքից բավականին դժվար այս գործընթացի պարճառն այն էր, որ Հունեին իբնից առաջ կես հազարամյակի ընթացքում կուտակված հունարեն խճճված փոքրերն ասորերեն թարգմանելու փորձառություն է ունեցել, մինչդեռ արաբերենի համար նման ավանդություն գոյություն չի ունեցել, իսկ սա նշանակում է, որ հնդեվրոպական լեզվաընտանիքին պարկանող հունարենից սեմական արաբերեն թարգմանությունը հեշտությամբ կարող էր կատարվել միայն սեմական մեկ այլ լեզվի՝ ասորերենի միջոցով: Այսպիսով, պարզ է, որ ասորերենի իմացությունը, որպես արաբական միջավայր թափանցած Արիստոտելյան փիլիսոփայության ուսումնասիրման նախադրյալ, էական նշանակություն ունի:

Շնորհիվ այս թարգմանիչների շնորհալի աշխատանքի՝ թե՛ արաբերենը և թե՛ ասորերենը, ի փարբերություն հունարեն ձեռագրերի, հունական փիլիսոփայությանն ու բժշկությանը վերաբերող մի շարք աշխատություններ են պահպանել, որոնք, հակառակ դեպքում, կարող էին ամբողջովին կորսված լինել: Միայն ասորերենով մեզ հասած նմանափայ աշխատությունների շարքում են Նիկողայոս Դամասկացու «Արիստոտելյան փիլիսոփայության ամփոփումը», «Սոկրատեսի և Էրոսթրոֆոսի միջև հոգու մասին երկխոսությունը», Թեոֆիլոս կոչված պոթագորյան կին փիլիսոփայի որոշ ասացվածքներն ու «Հիպոկրատի Էպիդեմիայի» վերաբերյալ Գալենի մեկնաբանությունը (վերջինը մասամբ հայտնի է հունարեն և արաբերեն լեզուներով), և այլքանը միայն ընթրվածներն են եղածներից:

Այնուամենայնիվ, կատարված թարգմանությունները միայն ասորերենից արաբերեն չեն եղել. Բ.ա. Ա. հազարամյակի վերջում թե՛ ասորերենով սրբեկոթագործող հույն գրողների և թե՛ բուն ասորի հեղինակների աշխատություններն իրենց արտացոլումներն են գրել այնպիսի բազմազան լեզուներում, ինչպիսիք են հայերենը, վրացերենը, սոգդայերենը, միջին պարսկերենը, ղպպերենը, եթովպերենն ու չինարենը: Ո՛չ էլ ասորերեն փոքրերի հունարեն փոխադրումներն

էին անհայր. Մեթոդիոսի (Է. դարավերջ) Նայրնության գիրքը, օրինակի համար, միջնադարյան լատինական Արեւմուտք ասորական բնագրից կապարված հունարեն թարգմանությամբ է անցել: Երբեմն այս անցումը կարող էր երկու ուղիներով կապարվել, ինչպես օրինակ, Եզովպոսի գրականության մի որոշ մասի հետ է պարահել. Եզովպոսի հունարեն վարքը մի կողմից Ք.ա. Ջ. կամ Է. դարին պարկանող Խիկարի արամեական հին պարմությունից վերցված հարվածներ է պարունակում, իսկ մյուս կողմից՝ Եզովպոսի առակների ասորերեն թարգմանված ժողովածուն (վերագրվում է Նովսեփոսին) վերստին հունարենի է փոխադրվել միայն ԺԱ. դարում՝ Սինրիպաս անվան փակ քոլարկված:

Քանի որ ասորական մշակույթն աշխարհագրական առումով սփռված է բյուզանդական եւ մահմեդական աշխարհների միջեւ, ուստի պարզ է, որ ասորական ժամանակագրական ընդարձակ ավանդությունն այնպիսի նյութեր է պարունակում, որոնք ուղղակիորեն առնչվում են բյուզանդական եւ մահմեդական պարմություններին, իսկ այնպեղ թաքնված շար արժեքավոր սկզբնաղբյուրներ կան, որոնք դեռ սպասում են իրենց պարշաճ գնահատականին {8}:

3. Ասորական գրականության զարգացման պարմական փուլերը.

Ասորական գրականության զարգացման պարմությունը կարելի է երեք հարկանշական ժամանակաշրջանների բաժանել.

1. Ասորական գրականության ոսկեդար (մինչեւ Է. դար).
2. Ասորական գրականության արաբական ժամանակաշրջան (մինչեւ 1300 թ.).
3. Արդի ժամանակաշրջան (1300 թ. մինչեւ ներկա օրեր):

Վերոնշյալներից առաջինը մի ժամանակաշրջան է, որն արգասաբեր հեղինակների հսկայական փաղանգի է ծնունդ տվել, որին էլ մենք կանդրադառնանք համառոր կերպով: Բ. ժամանակաշրջանը, որն իր ավարտին է հասնում մոնղոլների մահմեդականացմամբ, հիմնականում գրականության ամբողջացման մի շրջան է. ինչպես Բյուզանդական աշխարհն այս շրջանում ծնունդ տվեց հանրագիրարանային փեսակի գրականության, վկայաբանության սկզբնավորմանը, այնպես էլ, հենց նույն ժամանակաշրջանի մայրամուտին, ասպարեզ իջավ ասորի գիրականներից մեծագույնը՝ Գրիգոր Աբուլ Փարաջը՝ ավելի շար Բարհեբրեոս (†1286 թ.) անվամբ հայրնի: Գրիգորն իր ժամանակին հայրնի մարդկային գիրության բոլոր ոլորտներում էլ սրվարածավալ ուսումնասիրություններ է կարարել, եւ պարահական չէ, որ նա համեմարվել է իր արեւմտյան սերնդակից Թովմաս Աքվինացու հետ (†1274 թ.):

Երրորդ ժամանակաշրջանի սկիզբը փխուր էր Մերձավոր արեւելյան քրիստոնեական բոլոր համայնքների համար, սակայն ասորական ուսուցման եւ գրականության կանթեղն ամբողջությամբ չմարեց, եւ այդ ժամանակներից ցայժմ հեղինակների շարունակական հոսք կա, ովքեր կիրառում են դասական ասորե-

րենը՝ որպես իրենց սրեղծագործությունների հիմնական լեզու: Ասորական նորագույն շրջանի գրականության ծաղկման նշաններն ի հայտ են գալիս ԺԷ. դարում միայն՝ Ալբոշի դպրոցից (Նյուսիսային Իրաք) հորդած պոեզիայի տեսքով: Միայն ԺԹ. դարում էր, այնուամենայնիվ, որ Ուրմիայում, ասորերեն տպագրահասարոցների սրեղծմամբ, ասորերենով սրեղծված արդի գրականության տպագրումն իրապես ընթացք ստացավ (Ուրմիայի Ամերիկյան առաքելության կողմից ասորերեն թարգմանված անգլերեն սրեղծագործությունների թվում է նաև Ջ. Բունյանի «Ընթացք ուխտագնացության»-ը): Ներկա դարի վերջին մեկ կամ երկու տասնամյակները թե՛ Իրաքում եւ թե՛ Իրանում տեղական այս մշակույթի հանդեպ ի հայտ եկած նոր հետաքրքրության վկաները դարձան:

Ոսկեդարյան շրջանի (Գ.-Է. դարեր) ասորական գրականությունն սկսվում է մինչ այդ անհայտ Դ. դարի մեծագույն երկու հեղինակների՝ Ափրահապի, ով կրոնական տարապետական թեմաներ ընդգրկող 23 «Ճառերի» հեղինակ է եւ հաճախ հրեա-քրիստոնեական հարաբերություններն է շոշափում, եւ Եփրեմի, ում մենք արդեն հանդիպել ենք, անկասկած, ասորի բոլոր պոետներից լավագույնի երեսան գալով: Սակայն բացի հիանալի պոետ լինելուց, Եփրեմը նաև Ս. Գրքի որոշ գրքերի մի շարք արձակ մեկնությունների հեղինակ է, իսկ Ծննդոցի եւ Ելիցի նրա մեկնությունները հետաքրքիր ընդհանրություններ ունեն հրեական մեկնությունների հետ: Նրա արձակ ջափագովություններն ընդդեմ Մարկիոնի, Բարդայ-ժանի եւ Մանիի, չափազանց կարևոր սկզբնաղբյուրներ են այս «հերետիկոսական» երեք ուսմունքների վերլուծության տեսանկյունից:

Ե. եւ Ջ. դարերն ասորական գրականության թե՛ ոճի, թե՛ մտածողության առանձնահատուկ հելլենիզացման վկայություններն են, չնայած պոեզիան նման ներգործության քիչ է ենթարկվել: Այս դարաշրջանի մի քանի նշանավոր բանասրեղծների մեջ թե՛ Նակոր Սրճեցին (որպես աշակերտ) եւ թե՛ Նարսայը (որպես ուսուցիչ) կապված են Եղեսիայի հայրնի «Պարսից Դպրոցի» հետ, որը 489թ. Ջենոն կայսեր կողմից փակվելուց հետո տեղափոխվում է Մծբին՝ Պարսից տերության ապահով սահմանագլուխ: Այս կարևոր եւ ազդեցիկ դպրոցի պատմությունը, որի ղեկավարը Ե. դարի վերջին տասնամյակներում Նարսայն է եղել, լավագույնս նկարագրված է Արթուր Վյոբուսի (Arthur Vööbus) մենագրության մեջ:

{9} Քանի որ ասորական գրականությունը մեծավ մասամբ վանքերում է սրեղծվել, գաղմանալի չէ, որ դրա մեծ մասը գուր քրիստոնեական բնույթ է կրում: Աստվածաբանական գրականությունից երկու հեղինակներ՝ Փիլոքսենոս Մաբուգեցին (†523 թ.)՝ Ասորի Ուղղափառ Եկեղեցուց, եւ Բաբայը (†628 թ.)՝ Արևելքի Եկեղեցուց, առանձնանում են մյուս ինքնատիպությամբ: Նրանց ընդհանրությունն այն է, որ երկուսն էլ հոգևոր կյանքի վերաբերյալ երկեր են գրել,

մի նյութ, որի մասին շար հիանալի աշխարություններ կան ասորերենով: Ասորի բազում միսրիկներից ամենահայտնին է եզակին Իսահակ Նիվեացին է (Ասորի. Է. դար), ում գրվածքները հունարեն են թարգմանվել Թ. դարում Պաղեստինի Ս. Սաբբայի վանքում. նույնիսկ այսօր դրանք Աթոս լեռան վանականների կողմից ամենասիրված ընթերցվածքներն են, մինչ Եգիպտոսում դրանց ներշնչանքն ազդել է Ղապի Եկեղեցու վանական կյանքի արդի վերածննդի վրա: Թե ինչ ազդեցություն են ունեցել ասորի միսրիկները վաղ Սուֆիզմի վրա, հարց է, որը պարզա՞ն հետազոտման կարիք ունի:

Սուրբգրային մեկնությունը մեկ այլ կարևոր ժանր է՝ թե՛ Արևելյան է թե՛ Արևմտյան ասորական ավանդության նշանավոր ներկայացուցիչներով հանդերձ: Ժամանակի ընթացքում սուրբգրային մեկնությունները ըստ բնույթի ավելի ու ավելի հանրագիտարանային է ածանցյալ են դառնում. յուրաքանչյուր հեղինակ լայնորեն հղում է իր նախորդների աշխարությունները: Աստվածաբանական երկու ավանդությունների լավագույն ներկայացուցիչներից արևելասորի Իշողադ Մերվացին (Թ. դար) է արևմտասորի Դիոնիսիոս բար Սալիբին (†1171 թ.) ողջ Սուրբ Գիորգն ընդգրկող մեկնություններ են թողել: Նրանց աշխարությունների է օգտագործած աղբյուրների համեմատությունը ցույց է տալիս, որ չնայած աստվածաբանական փոփոխություններին, երկուստեք փոխազդեցության հիանալի օրինակներ կան, քանի որ մեկնության պարմությանն են առնչվում: Սուրբգրային որոշ մեկնիչներ ուշագրավ քննադատական մոտեցումներ են դրսևորել, գուցե ոչ ավելին, քան Նակոր Եղեսացին. բացի մի շարք սուրբգրային բարդ հարվածների խորաթափանց պարզաբանումներից (“scholia”), պահպանվել է նաև արարչության վեց օրերին (Վեցօրեից) վերաբերող նրա մեկնությունը, որը գիտական երկի մի ձև է:

Լայն ժողովրդականություն վայելած է սոցիալական պարմության տեսանկյունից նշանակալից հետաքրքրություն ներկայացնող ժանրը վարքաբանությունն է⁴: Բուն ասորական որոշ կտորներ, ինչպես օրինակ, Ալեքսիսի՝ «Աստծո ալրի» վարքը կարճ ժամանակահատվածում հունարեն ու լատիներեն է թարգմանվել է մեծ հռչակ վայելել միջնադարյան Արևմուտքում: Նախկին հետաքրքրաշարժ է պարսից մարտիրոսների վարքերի հավաքածուն՝ թվագրված Դ.-Է. դարերով. այս շրջանում Արևելքի Եկեղեցին ժամանակ առ ժամանակ Սասանյան իշխանությունների կողմից (որպես կանոն զրադաշտական քրմերի կողմից հրահրված) հալածանքների է ենթարկվել:

Վարքաբանությունը շար հաճախ սերտորեն առնչվում է տեղական վանական պարմության հետ: Սիմեոն Սյունակյացի՝ ասորերենով պահպանված վար-

4 Տե՛ս Susan Ashbrook, *Horizons in Semitic Studies*, ed. Eaton, 59-68:

քի առաջին հարվածում ճգնակյաց այս անձի և վերջինիս պարկանած վանական համայնքի միջև որոշակի լարվածություն է նկատվում: Թե ինչպես են նմանապիպ լարվածությունները հարթվել ժամանակի ընթացքում, կարելի է փեսնել Ասորի Ուղղափառ Եկեղեցու Զ. դարի պարմիչ Նովիաննես Եփեսացու «Արևելյան Սրբերի Վարքը» աշխարության մեջ: Արևելաստորական հեղինակների շարքում Թովմաս Մարգարու «Վանքերի վանահայրերի գիրքը» ցույց է տալիս, թե ինչպես է վանական կյանքը եռանդուն ու բազմաբնույթ կերպով շարունակվել Արաբական փորապետության սկզբնական շրջանում:

{10} Բարձրաստիճան և ցածրաստիճան եկեղեցականների առօրյա կենցաղային խնդիրներով զբաղվել են փարբեր եպիսկոպոսներ, այդ թվում նաև Արևելյան Ասորական Եկեղեցու պարբիարքներից երկուսը՝ Իշոյար Գ. (Է. դար) ու Տիմոթեոս Ա. (Ը. դարի վերջ և Թ. դարասկիզբ): Ավելի ուշ փղեկանում ենք, որ փվյալ ժամանակաշրջանում հույն հեղինակների գրվածքներ պարունակող ասորական լավագույն ձեռագրեր են հայտնաբերվել Ասորի Ուղղափառ Եկեղեցու Մար Մաթթայի (ցայժմ գործում է Նյուսիսային Իրաքում) վանքի գրադարանում. վերջիններիս մեջ նկարագրված են դրանց պարճենման գաղտնի աշխատանքներում այն ժամանակ կիրառված սկզբունքները:

Ի դեպ, ասորական ողջ գրականությունը, ըստ էության, կրոնական բնույթի է: Պարմաբանների համար առանձնահատուկ կարևորություն են ներկայացնում փարաբեսակ ժամանակագրությունները, որոնց գազաթնակներն են համարվում Միքայել Ասորին ու Բարեկերեոսը՝ Խաչակրաց արշավանքների պարմության ուսումնասիրման համար արժեքավոր երկու սկզբնաղբյուրներ: Այս փեսակ վաղագույն աշխարությունների թվում իր հիասքանչ պարգույթամբ աչքի է ընկնում «Նեսու Սյունակյացի Ժամանակագրությունը». մի աղբյուր, որից (օգտագործել ենք Պիեռ Բրաունի բառերը) «մենք կարող ենք ավելի շատ բան իմանալ այն մասին, թե ինչ է նշանակում հին քաղաքի փողոցներում ապրելը (և սովամահ լինելը), քան Յիցերոնի Նոմից»:

Վերելում արդեն խոսել ենք ասորիների փիլիսոփայական և գիտական գրականության մասին: Չնայած դրանց մեծ մասը թարգմանված կամ հիմնականում հիմնված է եղել հունարեն աշխարությունների վրա, այնուամենայնիվ, ուշ հռոմեական և վաղ արաբական շրջանները ծնունդ փվեցին այնպիսի գիտնականների, ինչպիսիք են Սերգիոս Ռեշայնան (Զ. դար), Նակոր Եղեսացին (Է. դար), Արաբաց եպիսկոպոս Գեորգը (Ը. դար) և Մոշե բար Կեփան (Թ. դար), ովքեր ինչպես աշխարհիկ, այնպես էլ կրոնական թեմաներով նշանակալից և ինքնապիպ ուսումնասիրություններ են հեղինակել: Արիստոփանի փրամաբանական աշխարությունների մեկնությունների և ներածությունների հիման վրա կազմված Օրգանոնը կարևոր փղ է զբաղեցնում այս կարգի գրվածքներում: Նե-

տարբերի է նկատել, թե ինչ չնչին չափով են արաբական արշավանքներն ազդել Է. դարի ասորական մշակույթի, այդ թվում նաև նույն դարի շար կարևոր գիտնականների և հայրկապես հայրնի աստղագետ Սեներիոս Սեբոքթագու վրա, ում գործերից հրապարակվել են դեռևս մի քանիսը:

Ոչ պակաս բարձր մակարդակի են ասորերեն աշխարություններն ալքիմիայի, երագների մեկնաբանման, աստղագիտության և հմայիլների տարբեր ձևերի մասին:

Ասորերենով պահպանվել են նաև լայն ժողովրդականություն վայելած գրականության մի քանի նմուշներ, ինչպես օրինակ՝ հնդկական ծագում ունեցող կենդանիների մասին հեքիաթներ՝ Կալիլահն ու Դիմնահը (ԺԷ. դարի եվրոպացի գրող Լա Ֆոնտենի մոտ ավելի շուր Բիդփեյ անվամբ հայրնի). այս գրվածքն ասորերեն երկու առանձին թարգմանություններում է հանդիպում, որոնցից մեկը կարարվել է միջին պարսկերենից Ջ. դարում, իսկ մյուսն արաբերենից՝ Թ. դարում: Բուն ասորական ակունքներ ունեցող, բայց վիճարկելի պոեմներին հաճախ ծիսական թեթև երանգներ են հաղորդվել (ինչն էլ ապահովել է վերջիններիս պահպանումը): Սա իրականում մի ժանր է, որի ակունքները Նին Միջագետք են հասնում, որտեղից գրված աքքադերեն և շումերերեն օրինակներ կան. ավելի ուշ այն յուրացրել են արաբները (muntazara-մունազարա անունով հայրնի) և, հավանաբար, նրանցից էլ՝ միջնադարյան իսլամական և պրովանսալական թափառաշրջիկ երգիչները: Ասորերենում հակադրությունների այնպիսի պատկերներ կարելի է գտնել, ինչպիսիք են մահն ու ստրանան, երկիրն ու երկինքը, տարվա ամիսները, ցորենն ու ոսկին, գինին ու մայրին և այլն:

{11} Մի քանի կարևոր ոլորտներ լոթյան են մատնվել՝ պարականոն ընդարձակ գրականությունն ու կանոնական և իրավական տեքստերը՝ մեկ-երկու անվանումներով, սակայն ցայժմ բավականաչափ բան է ասվել՝ ասորական գրականության շրջանակներում հանդիպող բազմազանության մասին որոշակի պարկերացումներ ունենալու համար: Իսկ այժմ անցնենք Արամեական զանազան բարբառներում ասորերենի զբաղեցրած տեղն ուսումնասիրելուն և առավել կարևոր «մասնագիտական մեթոդներից» մի քանիսն ամփոփելուն:

4. Ասորերենի տեղն արամեական բարբառներում. Սեմական լեզուների շարքում արամեերենը պարականոն է Նյուսիսարեմյան սեմական լեզվաընտանիքին, որն իր մեջ, բացի արամեերենից, ընդգրկում է նաև էբլայական, ամորիտական, ուգարիտական, փյունիկյան, եբրայական և Մոաբերեն լեզուները: Ք.ա. Բ. հազարամյակի վերջում Նյուսիսարեմյան սեմական լեզուների մեջ երկու հայրկանշական ենթախմբեր ի հայտ եկան՝ արամեերենն ու քանաներենը, որոնք ավելի ուշ ներառեցին փյունիկերեն, եբրայերեն և մոաբերեն լեզուները

(որոշ գիպնականներ ուզարիտական լեզուն եւս քանաներենի մի բարբառ են համարում):

«Արամերեն» եզրը, փաստորեն, բազմաթիվ տարբեր բարբառներ է ընդգրկում. սկսած -Բ.ա. Ա. հազարամյակի սկզբից առկա առանձին արձանագրություններից մինչև ներկա օրերը արամերենի բազմաթիվ արդի բարբառներ դեռևս կիրառվում են Սիրիայի, Արևելյան Թուրքիայի, Իրաքի, Իրանի, Ադրբեջանի Սովետական Նանրապետության որոշ շրջաններում: Ձեռքի տակ ունենք հիմնականում Մերձավոր Արևելքի երեք կրոնական խմբերի՝ հրեաների, քրիստոնյաների եւ մանդայականների կողմից արամերեն մի քանի գրավոր բարբառներով ստեղծված ընդարձակ մի գրականություն: Արամական այս երեք բարբառներից քրիստոնեականն ու մանդայականն իրենց առանձնահատուկ գիրն են զարգացրել, եւ հիմնականում այն պարճառով, որ այս երկու բարբառներն սկսել էին երկու առանձին անուններով՝ «ասորերեն» եւ «մանդայերեն» կոչվել: Նրեական արամերենի բազմաթիվ բարբառները, մյուս կողմից, օգտագործում էին հին Արամերեն գրի այն ձևը (ցայժմ հայտնի է «քառանկյուն Եբրայերեն» անունով. հակադրվել է մերժված «պալեոգրաֆիկ եբրայերեն» գրին), որն աքսորից հետո եբրայերեն գրելու նպատակով յուրացվել էր հրեաների կողմից:

Այսօր սովորական երևույթ է «քառանկյուն եբրայերենի» օգտագործումը արամերենի հրապարակված բոլոր բարբառներում, բայց ոչ ասորերենում եւ մանդայան լեզվում (չնայած այս երկու բարբառներով տեքստեր երբեմն հրապարակվել են եբրայերեն գրով):

Արամերեն բարբառների ճիշտ դասակարգումը դեռևս վիճելի հարց է գիպնականների շրջանակներում, եւ դրանց 4 ժամանակագրական խմբերի ներքոնըշյալ բաժանումը կատարվում է Ջ. Ա. Ֆիթցմայերի կողմից առաջադրված ընդհանուր կառուցվածքի համաձայն.

ա) Նին արամերեն-այս խումբն ընդգրկում է արամերենով պահպանված ամենահին տեքստերը. բոլորն էլ արձանագրություններ են, որոնց մեջ ամենահայտնին Սեֆիրի պայմանագրի տեքստն է: -Բ.ա. Ժ. դարավերջից մինչև Բ. դարի վերջն ընկած ժամանակահատվածը, երբ մի քանի տարբեր բարբառներ արդեն իսկ նկատելի էին, ընդհանրապես, որպես կայուն շրջան է բնութագրվում (պետք է հիշել, իհարկե, որ տարբեր ժամանակաշրջանների սահմանազատումներն անխուսափելիորեն քմահաճ են ինչ-որ առումով):

բ) Պաշտոնական արամերեն (երբեմն հանդիպում է նաև «Կայսերական Արամերեն» (Reichsaramaisch) անունով). ուշ-ասորական եւ նեո-բաբելոնյան կայսրությունների ժամանակաշրջանում արամերենն ավելի ու ավելի շար պետ պետական լեզու էր օգտագործվում (**J. B. Pritchard**, *The Ancient Near East in Pictures* {12}, Princeton, 1954, figure 235), որտեղ մի գիրը նրկայա սրածայր

ձողով գրված սեպագիր աքքադերեն է, իսկ մյուսը՝ գրչով գրված արամերեն) և, որպես այդպիսին, ժառանգվեց Աբեմենյան կայսրության կողմից: Այս ժամանակաշրջանին պատկանող թե՛ քարե արձանագրություններ և թե՛ Եգիպտոսում գտնված պապիրուսե փաստաթղթեր ու նամակներ ունենք, որոնք դուրս են բերվել երեք տարբեր արխիվներից, և որոնցից ամենահայտնին հրեականն է՝ Էլեֆանտինից: Եզրասի գրքի արամերեն տարբերակը հիմնականում այս շրջանին է պատկանում:

գ) Միջին արամերեն–Մերձավոր Արևելքում Ալեքսանդրի հաղթանակներին հաջորդող կես դարի ընթացքում (այլ խոսքով, հելլենիստական և վաղ հռոմեական կայսրության շրջան, մինչև Ք. հ. 200 թ.) պահպանված տարատեսակ տեքստերն այսօր միավորվում են «Միջին արամերենի» տակ: Իրականում ներկայացված բարբառներն արմատապես շատ տարբեր են. մի կողմից Դանիելի մարգարեության արամերեն տարբերակի և Քումրանի արամերեն տեքստերի որոշ հարվածների նման գրական տեքստերն արդեն հնացած են, մինչդեռ, մյուս կողմից, գոյություն ունեն տեղական տարբեր բարբառներ՝ հիմնականում արձանագրություններից հայտնի, որոնք Քրիստոնեության տարածման դարաշրջանում ի հայտ են եկել տարբեր միջավայրերում՝ Պերսայում (Նաբաթյան), Պալմիրում, Նաթթայում և Եդեսիայում (պահպանված ամենավաղ ասորերեն հեթանոսական արձանագրություններն այս ժամանակաշրջանին են պատկանում): Ներագայում Նայաստանից, Վրաստանից և Աֆղանստանից հայտնաբերված արձանագրությունները շատ հաճախ արամերենի աղավաղված ինչ-որ ձևեր են:

դ) Ուշ շրջանի արամերեն–Հռոմեական Կայսրության վերջն ու Արաբական փիրապետության սկիզբն ընդգրկող ժամանակաշրջանում (մոտավորապես Ք. ա. 200-700 թթ.) արամերենի արևելյան և արևմտյան բարբառների միջև ակնհայտ բաժանում է նկատվում: Արևմտյան արամերենն ընդգրկում է սամարական արամերենը, պաղեստինյան բազմաթիվ հրեա-արամեական բարբառներ և Պաղեստինի քրիստոնյաների օգտագործած արամերենը (նաև հայտնի պաղեստինյան ասորերեն անունով, քանի որ կիրառվում է ասորերենի Էսպրանգելո գիրը): Արևելյան արամերենը բաղկացած է մանդայան լեզվից, Բաբելոնի հրեա-արամեական բարբառներից և ասորերենից (վաղագույն հեթանոսական բնույթի ասորերեն արձանագրությունների թվագրումից մինչ Եդեսական շրջանն ընկած ժամանակահատվածում հանդես է եկել որպես ասորերենի դասական գրականության բարբառ և բաժանվել է որոշ կարգախմբերի):

ե) Արդի արամերեն–Արաբական նվաճումների ազդեցությունն աստիճանաբար արամերենին, որպես խոսակցական լեզվի, դուրս է մղում շատ շրջաններից, և միայն հեռավոր լեռնային շրջաններում է, որ արամերենը պահպանվել է

մինչ օրս՝ կիրառվելով քրիստոնյաների, հրեաների և նույնիսկ մահմեդականների մի քանի փոքր խմբերի կողմից: Արևմտյան արամեերեն բարբառը պահպանվել է միայն Անդրլիբանանյան երեք գյուղերում (երկուսը մահմեդական բնակչությամբ, մեկը՝ քրիստոնեական բնակչությամբ՝ Մալուլա գյուղում), չնայած ԺԷ. և ԺԹ. դարերի մի շարք ճանապարհորդների հաղորդմամբ, այն մի քանի դար առաջ լայնորեն փարածված լեզու է եղել: Արևելյան արամեերեն բարբառն, այնուամենայնիվ, փոքր-ինչ ավելի լայն կիրառություն ունի. հյուսիսային Իրաքի (Ջաբխ) հրեական բարբառով խոսում են այդպիսից Իսրայել գաղթածների մի մասը, մինչև այսօր քրիստոնեական մի քանի փոքր բարբառներ օգտագործվում են արևելյան Թուրքիայի, այուսիսային Իրաքի, հյուսիսարևմտյան Իրանի և Ադրբեջանի լեռնային շրջաններում: Թուրքիայի հարավարևելյան շրջանում՝ Թուր Արդինում, փեղացի ուղղափառ ասորիներն օգտագործում են Թուրոյո (Turoyo) կոչված բարբառը՝ «լեռնային լեզուն», որով դժվար է նույնիսկ գրել: Իրաքում, Իրանում և Ադրբեջանում քաղղեացիները կամ արևելյան ասորիները փոքր-ինչ փոքր բարբառով են խոսում (կամ ավելի ճիշտ՝ բարբառների խմբով), որով երբեմն նաև գրում են, իսկ արդի ասորերենով վաղագույն փեղացիները {13}՝ բոլորն էլ բանաստեղծական բնույթի, պարկանում են ԺԷ. դարին և սկզբնավորվել են Ալբոշի շրջանից, բայց միայն ԺԹ. դարում Ուրմիայում (այժմ՝ Ուեգայեհ) Ամերիկյան Պրեսբիտերական առաքելության կողմից տպագրական մամուլի հիմնադրումը ժամանակակից ասորերենի՝ գրական նպատակներով օգտագործվելու խթան հանդիսացավ: Իրաքում օգտագործվող բարբառը քաղաքացիների համար ուժ է ներկայացնում, որն ի գիտություն, հրապարակվել է Իրաքի կառավարության 1972 թ. ապրիլի 22-ի որոշմամբ. այն «մշակութային իրավունքներ է շնորհում ասորախոս քաղաքացիներին՝ ասորիներին, քաղղեացիներին և ուղղափառ ասորիներին»: Թե որքան ընդարձակ գրականություն կա այժմ արդի ասորերենով, կարելի է տեղեկանալ հետևյալ գրքից (**R. Macuch**, *Geschichte der spät und - neusyrischen Literatur*, Berlin, 1976):

Ասորերենը -Բ. հ. Ա. դարում ներկայանում է որպես արամեերենից անկախ բարբառ, իսկ դա առաջին հերթին հաստատվում է Եփրատ գետի մոտ հայտնաբերված Բիրեջիկի հեթանոսական արձանագրություններով՝ -Բ. հ. Զ. դար՝ Եդեսիայից (ներկա անունը Ուրֆա, ծագում է ասորերեն Ուռհայ անունից)՝ ասորական գրականության մշակութային կենտրոնից մոտ 45 մղոն դեպի արևմուտք: Վաղ շրջանի գրողներին ասորերենն իրականում հայտնի էր «Եդեսական» անվամբ, ի հաստատումն այն բանի, որ այն պարզապես սկզբնավորվել է Եդեսիայում՝ որպես տեղական արամեերենի մի բարբառ: Ողջ Միջագետքի արամեախոս քրիստոնյաների կողմից վերջինիս՝ որպես գրական լեզվի յուրացումը, -Քրիստոսի կողմից Աբգար Թուխ (ասոր.՝ Ուրբամա) արքային (արաբախոս բնակչության)

գրված նամակը (հունարեն է թարգմանվել Եվսեբիոսի կողմից նրա «Եկեղեցական Պատմության» մեջ 1.13) Եղեսիայում պահպանելու հավանականության արդյունքում ձեռքբերված հեղինակությամբ էր պայմանավորված:

Ուշագրավ փաստ է, որ գրավոր աստրերենը Դ. դարի ընթացքում քարացած ձևով, ձևաբանությամբ մեծապես տարբերվում է գրավոր դասական աստրերենից, որը դեռևս օգտագործվում է ուղղափառ աստրի հոգևորականների և այլոց կողմից: Այնուամենայնիվ, չնայած լեզուն նույնն է մնացել, աստրերենի երկու տարբեր, սովորաբար «Արեւելյան» և «Արեւմտյան» անուններով հայտնի, հնչողության ձևեր են առաջացել: Արեւելյան ձևը, որն էապես ավելի արխաիկ է, օգտագործվում է Արեւելքի Եկեղեցու անդամների կողմից, որոնք հիմնականում ապրում են Իրաքում և Իրանում, մինչդեռ Արեւմտյան ձևը կիրառվում է Մարոնիք և Ասորի Ուղղափառ ավանդությունների մեջ, որի հայրենիքը հեռավոր արևմուտքն է (ներկայիս Սիրիան և հարավարեւելյան Թուրքիան): Այս երկուսի միջև ամենաակնհայտ տարբերությունը բուն *ā* հնչյունի յուրօրինակ արտասանությունն է՝ Արեւելյան արտասանաձևը պահպանել է այն (*malkā*-արքա), մինչդեռ Արեւմտյանն այն փոխարինել է *ō* հնչյունով (*malkō*):

5. Աստրերեն գրի տարապետականք. Առաջին և երկրորդ դարերի ասորական արձանագրությունները (բոլորն էլ հեթանոսական) Պալմիրյան գրի հետ բազում նմանություններ ունեցող մի գրապետակ են օգտագործում, սակայն վաղ շրջանի ձեռագրերի ժամանակաշրջանում (Ե. դարի սկիզբ) այն առավել ձևավորված բնույթ է ստանում, որը հայտնի է «Էսպրանգելո» անվամբ (հուն. Strongulos բառից է և նշանակում է «շրջանակ»):

Բրիտանական գրադարանն այս բաշխման մեջ գեղագրության շատ արժեքավոր կտորներ է պահպանել: Չնայած Էսպրանգելո գիրը լայնորեն օգտագործվել է միջնադարում (և ի վերջո տեղական բնույթի դրամատիկ վերածնունդ ապրել ժԲ. դարում Թուր Աբդինում), սակայն Ը. դարի ընթացքում դրան զուգահեռ ևս դրա հիման վրա նոր ու ավելի կոտ գրապետակ է զարգացել: Այս գրի ճիշտ անունը {14} *սեդրոն* է (բառացիորեն նշանակում է խազ, նշան), սակայն եվրոպական աշխարհություններում այն հաճախ բնութագրվել է «Նակոբիկյան» անվամբ, քանի որ այն Նակոբիկյանների (այսինքն՝ ուղղափառ աստրիների) կողմից կիրառվող կանոնավոր գիր էր դարձել. իրականում այն Մարոնիքների կողմից էլ է օգտագործվում: Մի քանի դար հետո արեւելյան աստրիների շրջանակներում, մենք Էսպրանգելոյից ասորական մեկ այլ գրի աստիճանական ձևավորում ենք տեսնում, որն այսօր օգտագործվում է քաղղեացիների կամ «ասորեստրանցիների» կողմից. եվրոպական հեղինակների կողմից այն ընդհանրապես կոչվում է «Նեստորական» կամ «Քաղղեական» գիր:

Ասորական հնագրության ուսումնասիրումը դեռևս երիտասարդ գիտություն է, իսկ ձեռագրերի թվագրումը գրափաստական կարող է մեծ անվստահության պատճառ դառնալ: Նասանելի միակ ուղղորդումը **W. H. P. Hatch**, *An Album of Dated Syriac Manuscripts* (Boston, 1946) աշխատության մեջ տեղ գրած հիմնական նկարներն են:

Արաբական տիրապետության սկզբնական շրջանում արաբական, եբրայական եւ ասորական անձայնավոր գրերի ընթերցումը հեշտացնող տարբեր ձայնանշանների խմբեր առաջացան: Ասորերենի համար մենք գիտենք, որ այս ոլորտում ամենաառաջին փորձարկողներից մեկն ուղղափառ ասորի մեծ գիտնական Նակոր Եղեսացին է եղել (†708 թ.), որի քերականությունից, կարգավորման առաջարկներով հանդերձ, միայն հատվածներ են պահպանվել: Ի վերջո, ի հայտ եկան երկու տարբեր համակարգեր, որոնցից մեկն օգտագործվում է ուղղափառ ասորիների եւ մարոնիների կողմից (այսպես կոչված Նակորիկյան ձայնանիշեր), իսկ մյուսը կիրառվում է արևելյան ասորիների կողմից (այսպես կոչված Նեստորական ձայնանիշեր): Ձայնանիշերից առաջինի կառուցվածքը հիմնված է հունարեն տառերի վրա, երկրորդինը՝ կտրերի տարբեր համակցությունների: Գործնականում այսօր արևմտյան ասորի գրիչները (օգտագործելով սերտոն) հազվադեպ են մտադրվում ձայնանիշերի կիրառմամբ, մինչդեռ արևելյան ասորիները հաճախ են դրանք գեղեցիկորեն ամբողջությամբ:

Ցայժմ ապրած ասորի գրիչների մեծ մասը (ինչպես կրեանենք, ձեռագրերը դեռ շարունակում են ընդօրինակվել) շատ հիմնալի գեղագիրներ են եղել: Մի քանիսը նույնիսկ պարկերազարդողներ են եղել, իսկ ամենահայտնի պարկերազարդված ասորերեն ձեռագիրը, այսպես կոչված, «Ռաբբուլայի Ավետարանը» գտնվում է Ֆլորենցիայի Լաուրենտինյան գրադարանում:

Ըստ ընդարձակ մի հիշատակարանի՝ Ռաբբուլայի գրագիրն այս հիասքանչ աշխատանքն ավարտել է «Ալեքսանդրի 897 թվի» փետրվարի 6-ին, որը 586 թ. է, Սուրբ Նովիանենս Բեթ-Չագբայի վանքում՝ հավանաբար ինչ-որ տեղ Նյուսիսային Սիրիայում: Ժյուլ Լերուայի “*Les manuscrits syriaques a peintures, two volumes, one of text, one of plates; Paris, 1964*” գրքին ծանոթ յուրաքանչյուր ոք կարող է հեշտությամբ նկատել, որ վերոնշյալ ձեռագիրը պահպանված միակ պարկերազարդ ասորերեն ձեռագիրը չէ:

Մաս Բ.

6. Ուսումնասիրության միջոցները

ա) Քերականական ձեռնարկներ. Սրանք ընդհանրապես բաժանվում են երկու՝ փարբական և քաղվածո քերականական կարգախմբերի:

Տարրական քերականություններ. Մինչ Զոն Նելեյի “First Studies in Syriac” խորագիրը կրող հայտնի հայրնվելը, սկսնակների համար անգլերենով առաջին աշխատությունը “T. H. Robinson, Paradigms and Exercises in Syriac Grammar” (Oxford, 4th ed. 1968) գիրքն էր {15}, որը կազմված էր վարժություններից (ասորերեն-անգլերեն, անգլերեն-ասորերեն) և երկլեզու բառարաններից: Մի շարք պարճառներով Ռոբինսոնի «Քերականությունը» հետագայում խմբագրված վերահրապարակություններով հանդերձ, այդքան էլ գոհացուցիչ աշխատություն չէր համարվում: Ասորերենին վերաբերող լայնակալի աշխատություններից լավագույնը թերևս Լ. Պալացիոսի “Grammatica Syriaca” (Rome, 1954) է, որը ոչ միայն վարժություններ, այլ նաև սերտյագիր փնթափերից ընդգրկված կարճ հարվածներ է պարունակում: Գերմաներեն կարդացող սկսնակների համար Ա. Ունգերի “Syrische Grammatik” (Munich, 1913) գիրքը շարք հաջող է ձևակերպված:

Նախնական փուլում անհրաժեշտ է սկսել պարզ ձայնավորված փնթափերի ընթերցանությամբ. այս առումով Ն. Ֆ. Վիշի “Clavis Syriaca” (London, 1883) աշխատության մեջ Պեդիթթայի Ավետարանների քերականական վերլուծությունները հարկապես օգտակար կլինեն լեզուն ինքնուրույն սովորողների համար: Շարք ալֆի կարճ, բայց նույն ձևով հասկանալի և քերականական ակնարկի ամփոփ ներածություն է Բ. Դեյվիդսոնի “Syriac Reading Lessons” (London, 1851) գիրքը:

Մերձավոր Արևելքում մի շարք փարբական գրքեր են կազմվել՝ դպրոցական աշակերտներին ասորերեն ուսուցանելու նպատակով: Նարկ ենք համարում հիշել նաև Ամար Էլ-Խուրիի “Companion” (Beirut, 1972) գրքի մասին, որն ունի երկլեզու՝ անգլերեն և արաբերեն բացատրություններ:

Քաղվածո քերականություններ. Է. Նեսթլիի (անգլ. թարգմանությամբ, Բեռլին, 1889 թ.) և Կ. Բոնկելմանի (Լայպցիգ, 1899 թ., և հետագա հրապարակություններ) կողմից գերմաներեն լեզվով կազմված միջին ծավալի քերականության ձեռնարկները մասնավորապես աչքի են ընկնում կարարված աշխատանքի վարպետությամբ: Այս երկու աշխատությունները ևս փնթափերից ընդգրկված հարվածներ և բառարան են պարունակում: Նամեմարական ծավալով և ֆրանսերեն բացատրությամբ է (բայց առանց որևէ փնթափի) կազմված

L. Կոստրազի “Grammaire syriaque” (Beirut, 2nd ed., 1964) աշխատությունը, որպեսզի օգտակար տպագրական տարբերություն կա անփորձ եւ ավելի փորձառու ուսանողների համար նախատեսված նյութերի միջև: Արժեքավոր են նաեւ Ռ. Դյուվալի “Grammaire syriaque” (Paris, 1881) ու ամենից առաջ Թ. Նյոլդեկեի “Kurzgefasste syrische Grammatik” (Leipzig, 2nd ed., 1898. English translation by J. A. Crichton, London, 1904) ձեռնարկները: 1966 թ. գերմաներեն վերահրապարակությունը որոշ հավելումներ եւ մեջբերված հավրվածների ցանկեր է պարունակում: Չնայած երկու աշխատություններն էլ ընդհանուր առմամբ ուշադրություն են դարձնում շարահյուսությանը, այնուամենայնիվ, ասորերենի շարահյուսության մասնավոր պարմաբնական ուսումնասիրության մեծ կարիք է զգացվում:

Առավել հին հապրնիի քերականություններից կարելի է առանձնացնել Ա. Մերքսի լատիներեն “Grammatica Syriaca” (Halle, 1867) աշխատությունը: Ռենեսանսի շրջանում սրելովված քերականությանը վերաբերող եվրոպական հնագույն ձեռնարկների վերաբերյալ ինտրիգային մի հայացք է պահպանվել Վ. Սյրոթմաննի “Die Anfänge der syrische Studien in Europa” (Göttingen, 1971) վերահրապարակված աշխատության մեջ:

{16} Չպետք է մոռանալ, սակայն, որ մի շարք քերականական բնույթի աշխատություններ գրվել են նաեւ հենց ծագումով ասորի գիտնականների կողմից, որոնց ակունքները հասնում են մինչեւ Է. դար՝ Նակոր Եղեսացի: ԺԳ. դարի հայրենի գիտնական Բարիերբեռտը նույնիսկ չափածո եւ արձակ քերականություններ է գրել:

Մերձավոր Արեւելքում վերջերս հրապարակված քերականական ձեռնարկների շարքում պետք է հիշատակվեն Դամասկոսի Կաթոլիկ Ասորի մեկրոպոլիտի եւ Պեշիթթայի Մոսուլյան հրապարակության (1887-91թթ.) խմբագրի՝ Ս. Ջ. Դեյվիդի արաբերեն աշխատությունը (Մոսուլ, 1879 թ., Բ. հրապարակություն՝ 1896 թ.; C. J. David, Mosul, 1879; 2nd ed. 1896) եւ Բիրմինգհեմի համբավի՝ Ալֆոնս Մինգանայի “Clef de la langue araméenne” (Mosul, 1905) ֆրանսերեն գիրքը:

բ) Տեքստերի անթոլոգիաներ (Քրեստոմատիաներ). Բռնկելմանի «Ասորերենի քերականություն» քրեստոմատիայի վերջում տեքստերի միանգամայն լավ հավրվածներ են ընդգրկված (առաջին եւ վերջին հրապարակությունների միջև տեքստերի ընտրության աննշան տարբերություններ կան)՝ բոլոր 3 գրերի օրինակներով՝ եւ՝ ձայնավորված, եւ՝ առանց ձայնավորների: Ընդգրկված կտորներից մեկը «Ադդայի վարդապետության» մի մասն է՝ Քրիստոսի հետ Արգար թագավորի ունեցած նամակագրությանն առնչվող ավանդապատումի ասորերեն շարքը: Բռնկելմանի աշխատանքն օգտակար բառարան է ներառում, որի անգլերեն հրապարակությունը՝ սրուգաբանական ծանոթագրություններով,

առանձին «Ասորերեն բառարան» խորագրի ներքո հրապարակել է Մ. Գոշեն Գոթշպայնը (“A Syriac Glossary”, Wiesbaden, 1970):

Ռ. Քոբերսի “Textus et Paradigmata Syriaca” (Rome, 1952) գիրքը սուրբգրային և այլ բնույթի տեքստերի հերաբրեքի հապավածներին հաջորդող հարացույցների մոտ 20 էջ է բովանդակում: Սրան առնչվող բառարանը գերեզմանավորված է նրա «Ասորերենի բառարանում» (Նոն, 1956), որի հավելվածը պահպանվել է “Christianum Analecta Orientalia” շարքի 39-րդ համարում (1970, էջ 315-319):

Չայնավորված սերտ գրով տեքստերի շարք լավ բազմազանություն կա Լ. Կոստրակի և Պ. Մուրերդերսի “Anthologie syriaque” (Beirut, 1955) գրքում, որտեղ գերեզմանավորված է նաև հեղինակների կողմից ներկայացված ամփոփ մի ներածություն:

Առավել հին քերականական ձեռնարկների մեծ մասը քրեստոմափաները տեղադրել են վերջում, և դրանք երբեմն ընդգրկում են տեքստեր, որոնք ոչ մի տեղ հրապարակված չեն (օրինակ, Մարգարեների վարքի ասորերեն մի տարբերակ գտնվել է Նեսթլի քերականության մեջ): Քերականական բացատրություններից գերծ ժԲ. դարի մի քանի քրեստոմափաներ նույնպես բազմաթիվ անտիկ տեքստեր են պարունակում. այս առումով արժեքավոր են նաև Ա. Ռյոդիգերի (Halle/Leipzig, 3rd ed., 1892) ու Պ. Յինգերի (Rome, 1871-73) աշխատությունները:

Մերձավոր Արևելքում՝ Ղամիշլիում (Արևելյան Սիրիա. պարսկական Մծբին քաղաքի դիմաց, այժմ Նուսեյրին՝ Թուրքիայի սահմանին) ընթերցանության համար նախատեսված սերտյագիր լավ գրքեր կան հրապարակված, որոնց շարքում կարելի է առանձնացնել Ա. Ն. Կարաբաշի “Reading Exercises” (vol. 8, 1972) 8 համարյակը: Այստեղ առկա են արդի ասորի հեղինակների կողմից գրված մի քանի տեքստեր:

Առանձնահատուկ ուշադրության են արժանի Մերձավոր Արևելքում տպված երկու հին անթոլոգիաներ՝ 1898 թ. Ուրմիայում Քենթրերիի Արքեպիսկոպոսի առաքելության կողմից հրապարակված «Գրությունների Փոքրիկ Գիրքը» (Khtabana d-parthuthe), և Ջ. Ի. Մեննայի “Morceaux choisis de litterature arameenne” (2 volumes, Mosul, 1901, reprinted Baghdad, 1977) երկերի երկհատորյակը, որոնք եւս անտիկ որոշ տեքստեր են պարունակում: {17} Այս երկու գրքերում էլ օգտագործված է արևելաստորական գիրը:

գ) Բառարաններ. Բացի քերականական ձեռնարկներին և քրեստոմափաներին կցված բառարաններից, սկսականների համար մասնավորապես շարք կարևոր է Վ. Ջենինգսի “A Lexicon to the Syriac New Testament” (Oxford, 1926) բառարանը. այն կիրառող յուրաքանչյուր ոք կարող է հեշտությամբ նկատել, որ ընթերցանության համար նախատեսված ասորերեն հնարավորինս ձայնավոր-

ված ամենաշար րեքսերը Պեշիթայի Նոր Կրակարանի՝ Մեծ Բրիտանիայի եւ այլ երկրների Ասորվածաշնչային ընկերությունների հրապարակություններն են: Գործածության րեսանկյունից առավել մարչելի եւ Ջեսսի Փեյն Սմիթի (րիկին Մարգոլիտ)՝ այբբենական եւ լեզվաոճական դասակարգվածությամբ աչքի ընկնող “Compendious Syriac Dictionary” (Oxford, 1903) ու Լ. Կոսրագի “Dictionnaire syriaque-francais” (Beirut, 1963) բառարանները, որրել անգլերեն, արաբերեն, ինչպես նաեւ ֆրանսերեն լեզուներով նշված եւ նաեւ բառարմարները: Վերոնշյալ երկու բառարանները կարող եւ գործնական ամենարարեր նպարակների համար կիրառվել, սակայն սրանցից եւ ոչ մեկում օգրագործված սկզբնաղբյուրների մասին ոչ մի ակնարկ չկա. այդ րեսանկյունից անգնահարելի եւ ասորական բառարանագիրության հերելյալ երկու նվաճումները՝ Ռ. Փեյն Սմիթի (Ջեսսիի հայրը) «Նանրագիրարան» (R. Payne Smith, Thesaurus) ու Կ. Բրոկելմանի «Բաոգիրը» (C. Brockelmann, Lexicon):

Կ. Բրոկելմանի “Lexicon Syriacum” (Berlin, 1895, 1928) Բաոգիրքն օգրագործման րեսանկյունից առավել հարմար եւ պարզ մի հարոր է (վերջում՝ լարիներեն-ասորերեն ծանոթագրությամբ), որրել հեղինակի կողմից ներկայացված եւ բառարմարները, իսկ օգրագործված լեզուն լարիներենն է (Բ. հրապարակության մեջ ասորերեն համարժեքի համար պարգապես հղման էջն է նշված, սակայն առաջինում պարշաճորեն հենց ասորերեն բառարմարն է ներկայացված): Նազվագյուր հանղիպող բառերի շարքերը հարկապես շար օգրակար եւ, բայց բավարար րել չունենալու պարճառով սղվել եւ համապարասխան մեջբերումները:

Ռորերր Փեյն Սմիթի “Thesaurus Syriacus” (Oxford, 1879, 1901) աշխարասիրությունը պերք է թերես Օքսֆորդի համալսարանի հրապարակած ամենաճոխ բառարանը համարել. գեղեցիկ գլխագրերն ու կառուցվածքը՝ ծանոթագրությունների համար նախարեսված ընղարճակ լուսանցքներով, աչքի եւ ընկնում մեջբերված օրինակների առարությունը: Աշխարության մեջ (բոլոր բառարանների նման կազմվել է ավելի հին բառարանների հիման վրա) նախապարվությունը րրված է լարիներեն լեզվին, քան անգլերենին, իսկ բառարմարների դասակարգումը կարարված է յուրահարուկ վարպերությամբ:

Ռ. Փեյն Սմիթի «Նանրագիրարանի» հավելվածը (Օքսֆորդ, 1927 թ.) հերարագյում լրացվել է իր աղջկա՝ Ջեսսիի կողմից՝ որպես միջանկյալ րարիներին առաջին անգամ հրապարակված րեքսերի ամբողջականացում: Ներագաորոշ լրացումներ՝ հիմնականում բժշկագիրական բնույթի րեքսերից վերցված, րել եւ գրել Orientalia-ի Ը. հարորում (1939 թ., էջ 25-28):

{18} Թե՛ Կ. Բրոկելմանը, թե՛ Փեյն Սմիթը լավագույնս օգրագործել եւ 10-րդ դարի ասորի բառարանագերների՝ Բար Բահլուլի (խմբագրված Ռ. Դյուվալի

կողմից, 1888-91 թթ.) և Բար Ալիի (Ա. մասը խմբագրված Գ. Նոֆֆմաննի կողմից 1874 թ., Բ մասը՝ Ռ. Ջ. Ն. Գոթթայլի կողմից 1908թ.) աշխատությունները: Ավելի առաջադեմ ուսանողների համար այդ երկու աշխատություններն առավել արժեքավոր են: Ավելի հին եվրոպական բառարանների՝ Վոլթոնի բազմալեզու բառարանի հիման վրա ստեղծված Ի. Կասսելլի *“Lexicon Heptaglotton”* (London, 1669) ու Կ. Շաֆի *“Lexicon Syriacum Concordantiale”* (Leiden, 2 nd ed., 1717) բառարանները դեռևս շարունակվում են լայնորեն կիրառվել: Կ. Շաֆն ընդգրկել է միայն նորկրականարանյան բառապաշարը, բայց այդ առումով այն նաև համաբարբառ է հանդիսանում:

Ասորերեն մի քանի բառարաններ հրատարակվել են նաև Մերձավոր Արևելքում. առանձնահատուկ ուշադրության արժանի են միայն մի քանիսը՝ **G. Cardahi, Al-Lobab**, *“Sive Dictionarium Syro-Arabicum”* (2 volumes, Beirut, 1887-91), **T. Audo**, *“Dictionnaire de la langue chaldeenne”* (Syriac-Syriac, in 2 volumes, Mosul, 1897) և **J. E. Manna**, *“Vocabulaire chaldeen-arabe”*, (Mosul, 1900), քանի որ դրանք պարունակում են երբեմն նույնիսկ եվրոպական բառարաններում բացակայող բառեր: Բաղդադի Ասորական Ակադեմիան եւս նոր բառարան կազմելու նախնական ծրագիր ունի:

Թվարկված բոլոր բառարանների ստեղծմամբ ասորերեն կարևոր փեքսպերի հսկայական մի շարք է հրատարակվել, և քանի որ դրանք ոչ մի փեղ չարձանագրված բառերի ամբողջական շարքեր են պարունակում, ուստի վերջապես «Բառագանձի» այլ հավելումների որոշակի կարիք է զգացվում:

դ) Ասորերեն Ս. Գրքի հիմնական հրատարակությունները. Սկսնականների ընթերցանության փորձառության ձեռքբերման համար շատ օգտակար է Մեծ Բրիտանիայի և Աստվածաշնչյան փարբեր Ընկերությունների հրատարակած Պեշիթթայի Նոր Կտակարանը. այն շատ պարզ և ամբողջապես ձայնավորված (արեւմտաասորական սերտո ձայնավոր նշաններով) փեքսպերով մի պապագրություն է:

Սկզբում Ավերարաններն առանձին են հրատարակվել: Այս հրատարակության առավելությունը նրանում ընդգրկված հավաստի փեքսպերն են, իսկ Ավերարաններինը հիմնված է Փուսիի և Գվինի քննական հրատարակության վրա (1901 թ.). նշվածներից վերջինը գուցադրված լատիներեն թարգմանություն ունի, իսկ նրանում առկա ընթերցանության նյութի փարբերակները (հաճախ աննշան, երկրորդական բնույթի) մի շարք հնագույն ձեռագրերից են ընտրված: Քանի որ բուն ասորերեն նորկրականարանյան կանոնը չի պարունակում Պեքսպերսի Բ., Նովիանեսի Բ. և Գ., Նուդայի թղթերն ու Նայրնության գիրքը, ուստի սույն գրքերի պեշիթթայի թարգմանություն գոյություն չունի, այդ իսկ պատճա-

ռով Աստվածաշնչային Ընկերությունը դրանց ավելի ուշ շրջանի՝ հավանաբար Զ. դարում կապարված թարգմանություններն է հրապարակել:

Ինչ-որ մեկին չձայնավորված տեքստերի ընթերցանությանը ծանոթացնելու տեսանկյունից Պեշիթթային զուգահեռ հին ասորերեն Ավերարանների ընթերցումը լավագույն տարբերակն է: Ամենահարմարն այս առումով Կուրե-տոնյան ձեռագրի հիման վրա Ֆ. Կ. Բուրկիպուրի “*Evangelion da-Mepharreshe*” (Cambridge, 1904) հրապարակությունն է (Էջի վերելի կառուցվածքում Սինայական տարբերակներով հանդերձ): Այսպես տեքստին զուգահեռ անգլերեն թարգմանությունն է դրված, իսկ օգտագործված ասորերեն գրապատկերները Էստրանգելոն է (ծանոթագրություններում ավելի փոքր ծավալի տպագրություն, իրականում հիմնված են Բուրկիպուրի սեփական գեղեցիկ ասորերեն ձեռագրի վրա): Մի քանի հաղթածների ընթերցումից հետո միայն {19} կարելի է նկատել, որ այն ավելի շուրջ ոչ թե Պեշիթթայի, այլ հունարեն բնագրի առավել ազատ թարգմանությունն է. Պեշիթթան իրականում հին ասորերեն բնագրի վերանայումն է: Նրանց համար, ովքեր հետաքրքրվում են Նոր Կտակարանի տեքստաբանական քննադատությամբ, շատ կարևոր է օգտագործել Ա. Լյուիսի կողմից կապարված «*Sinaiticus*»-ի հրապարակությունը՝ բուրկիպուրյան տարբերակի հարակցմամբ հանդերձ:

Որպես Մադրիդի Պոլիգլոտի (1967թ.) 6-րդ հատոր՝ հրապարակվել է Ի. Օրսիգ դե Ուրբինայի “*Vetus Evangelium Syrorum; Diatessaron Tatiani*” (1967) աշխատությունը, որտեղ հեղինակը գեղեցիկ է Դիատեսարոնի պահպանված ասորերեն հաղթածները:

Է. դարում Նարեկյան անունով հայրնի սուրբգրային տառացի թարգմանությունը (փաստորեն առավել հին վերանայումների սրբագրումը)՝ «Փիլոքսենյան Ասորերեն Տարբերակ» սխալ խորագրով հրապարակվել է Զ. Ուայթի կողմից (“*Versio Syriaca Philoxeniana*”, 1778-1803). պահպանվել է նաև լատիներեն թարգմանությունը:

Պեշիթթայի Նոր Կտակարանի կամ դրա որոշ հաղթածների անգլերեն մի քանի թարգմանություններ հրապարակել են Զ. Մուրդոքը (1851 թ.), Վ. Նորթոնը (1890 թ.) և Գ. Մ. Լամսան (1933 թ.):

Տպագիր համաբարբառի բացակայության պայմաններում Շաֆի Նոր Կտակարանի բառարանը (մեքենագիր բառարանների կարգին է դասվում) դեռևս լայն կիրառություն ունի: Ա. Բոնուսի կողմից կազմված անտիպ մի համաբարբառ էլ այժմ Մելբուրնի Մերձավոր Արևելքի ուսումնասիրման ֆակուլտետի սեփականությունն է:

Պեշիթթայի Նոր Կտակարանի գրքերից Ննգամարյանի (Էստրանգելոն) և Սաղմոսացի (սերպոն) պատշաճ և լավագույն հրապարակություններն իրակա-

նացվել են Մեծ Բրիտանիայի և Աստվածաշնչային այլ ընկերությունների կողմից: Լույս տեսած այլ գրքերի շարքում Պեշիթթյան Հին Կրակարանի ծանրակշիռ մի հրապարակություն իրականացվել է պրոֆ. Փ. Ա. Ն. դը Բոյեռի (Լայդեն; P. A. H. de Boer, Leiden) կողմից, որի ընդհանուր ղեկավարությամբ տպագրվել են հետևյալ գրքերը՝

Երգ Երգոց, Տոբիթ, Դ. Եզրաս (1966 թ.)

ա) 1: Ծննդոց, Ելք (1977 թ.)

բ) 2: Դավաժնորաց, Սամուել (1978 թ.)

գ) 4: Թագավորաց գրքեր (1976 թ.)

դ) 3: Բարութի Հայտնությունը, Դ. Եզրաս (1973 թ.)

ե) 6: Օրհներգեր, Սողոմոնի Սաղմոսները, Պարականոն Սաղմոսներ, Տոբիթ, Ա. (Գ.) Եզրաս (1972 թ.):

Վերոնշյալ գրքերն էստրանգելո գրադեսակով են տպագրված. հրապարակության համար օգտագործվել են ինչպես հին, այնպես էլ ավելի ուշ շրջանի բազում ձեռագրեր: Ուշագրավ են մի քանի առանձին գրքերի առավել հին հրապարակությունները՝ Սաղմոսաց (Վ. Բարնս, 1904 թ.), Երեմիայի Ողբը (Բ. Ալբրեկտսոն, 1963 թ.), Սողոմոնի Իմաստությունը (Ջ. Ա. Էմերթոն, 1959 թ.) և Անվավեր գրքերը (Պ. դը Լագարդե, 1861 թ.):

{20} Պեշիթթյան Հին Կրակարանն ամբողջությամբ ընդգրկող մի քանի հին հրապարակություններ էլ կան, որոնց պարբերական ընթացքում հնագույն կամ լավագույն ձեռագրեր չեն օգտագործվել: Ս. Լիի հրապարակությունը (S. Lee, London, 1823), որտեղ սերտո գրադեսակն է օգտագործվել, գիտական տեսանկյունից երբեմն կարող է երկրորդական նշանակություն ունենալ. այն մեծավ մասամբ հիմնված է Բրիան Վոլթերնի Լոնդոնյան բազմալեզու Սուրբ Գրքի հրապարակության վրա (**Brian Walton**, London Polyglot Bible, 1657), որի ակունքներն էլ հասնում են մինչև 1645 թ. Փարիզում լույս տեսած բազմալեզու Աստվածաշունչ: Այս հրապարակությունների համար օգտագործված ձեռագրերը մեծավ մասամբ վերջին շրջանին պարկանող արևմտաասորական սկզբնաղբյուրներ են, չնայած որ Լիի օգտագործել էր ԺԲ. դարի «Բուխանանյան Աստվածաշունչը» (Buchanan Bible), որը 1809 թ. Նոդկասարանից Հայր Բլոդ Բուխանան (Reverend Claude Buchanan) էր բերել և ներկայացրել Քեմբրիջի Համալսարանական Գրադարանին:

Ամերիկյան Պրեսբիտերական Առաքելության կողմից 1852 թ. Ուրմիայում հրապարակված Պեշիթթյան ընդգրկում է ողջ Հին Կրակարանը. այս տեսանկյունից արևելաստորական գրադեսակով ձեռագրերը որպես սկզբնաղբյուրներ են օգտագործվել: Ջոզեֆ դը Կելայտայի (Joseph de Kelayta) վերախմբագրմամբ

վերջինս պապագրվել է «Ս. Երրորդություն» Աստվածաշնչային Ընկերության կողմից 1913 թ. (Արևելյան Ասորական բնույթին համապատասխան):

Կաթոլիկ ասորի եպիսկոպոս Ս. Ջ. Դեյվիդի (C. J. David) կողմից պատրաստված Մերձավորարևելյան Բ. հրապարակությունը պապագրվել է Մոսուլի Դոմինիկյան հրապարակչությանը 1887-1892 թթ՝ արևելաասորական (ձայնավորված) գրադարանով: Այն վերահրապարակվել է 1951 թ. Բեյրութում և ցայժմ կիրառելի է:

Տեղին ենք համարում հիշել նաև Միլանի Ամբրոսյան գրադարանում գտնվող Պեշիթթայի Է. դարի ձեռագրի ֆոտոլիթոգրաֆիկ պատճենի հիասքանչ օրինակի մասին. գործընթացի պատասխանատուն (1876-1879 թթ.) Ա. Մ. Չերիանին (A. M. Ceriani) է եղել:

Քանի որ ընդհանուր առմամբ շատ քիչ տարբերություններ կան Պեշիթթայի ձեռագրերի միջև (Սեպտուագինյայի հետ համեմատված), անկախ կիրառման նպատակից, էական նշանակություն չունի, թե պեշիթթայան Նին Կրակարանի հրապարակություններից ո՞ր մեկն է օգտագործվում: Պեշիթթայի հիման վրա երբայական տեքստի լուրջ հետազոտման տեսանկյունից, այնուամենայնիվ, կարևոր է հնագույն ձեռագրերի հիման վրա կատարված հրապարակությունն օգտագործել (առաջին հերթին Լայդենի հրապարակությունը), քանի որ Պեշիթթայի տեքստն իր պարմության սկզբնական շրջանում ակնհայտորեն որոշակի փոքր, բայց կարևոր փոփոխությունների է ենթարկվել:

«Syro-Hexapla»-ի համար Ա. Մ. Չերիանին Ամբրոսյան գրադարանում պահվող Թ. դարի ձեռագրի ֆոտոլիթոգրաֆիկ հրապարակությունն է պատրաստել (1874 թ.), որտեղ Նին Կրակարանի Բ. մասն է (Նորի գրքից մինչև Մադաքիա) միայն ընդգրկված: Այս ձեռագրի համեմատական հատորը գոյություն է ունեցել ԺԶ. դարում և օգտագործվել է Վերածննդի շրջանի շատ գիտնականների կողմից. հետագայում, այնուամենայնիվ, այն անհետացել է դեռևս չպարզաբանված հանգամանքներում: «Syro-Hexapla»-ի ցրիվ եկած մյուս տեքստերը Նին Կրակարանի առաջին մասի գրքերն են պարունակում, որոնք ի մի բերվել և հրապարակվել են Պ. դր Լագարդի կողմից («Bibliothecae Syriacae», Gottingen, 1892). վերջինիս առավել հին հրապարակության (1880 թ.) մեջ երբայերեն գրադարանն է օգտագործված: Ներագայում հայտնաբերված որոշ հարվածներ հրապարակվել են Վ. Բաարսի կողմից («New Syrohexaplaric Texts», Leiden, 1968), մինչդեռ հարավարևելյան Թուրքիայում գտնված Ննգամարյանի ձեռագրի լուսանկարչական հրապարակությունը կատարվել է Ա. Վյորուսի կողմից (A. Vööbus, Louvain, 1975):

Պեշիթթայան Նին Կրակարանի ներքոնշյալ գրքերի համար նաև համաբարբառներ կան կազմված Սաղմոսաց գիրք (N. Sprenger, Wiesbaden, 1976), Ժո-

դովողի գրքի երկու փարբերակներ (**W. Strothmann**, Göttingen, 1973 և **M. M. Winter**, Leiden, 1976): Ոչ մի արժեք չներկայացնող «Հին Կրակարանի Պեշիթթայան ձեռագրերի ցուցակ» փայագրվել է Պեշիթթայան ուսումնասիրող ինստիտուտի կողմից (Լայդեն, 1961 թ.): Հավելվածում պետք է խոսվի նաև Սուրբ Գրքի՝ հունարենից Քրիստոնյա պաղեստինայն արամեերենի (կամ պաղեստինյան ասորերեն) թարգմանված փարբերակի մասին: Ինչպես արդեն տեսանք, այն ասորերենից միանգամայն փարբերվող արամեերենի արեւմտյան մի բարբառ է, չնայած նույնպես էսպրանգելո գրափեսական է կիրառում: Առանձին հավավածներ հաճախ պահպանվել են կրկնագիր ձեռագրերի փողափակերում: Հին Կրակարանի հավավածները ներկայումս վերախմբագրվում են Մ. Գոշեն Գոթթեյստայնի (**M. Goshen-Gottstein**) և նրա օգնականների կողմից, իսկ «Սուրբ Գրքի Պաղեստինյան ասորերեն փարբերակը» մեկ հատորով (Նագամադյան և Մարգարեններ) ոչ վաղ անցյալում է փայագրվել (Երուսաղեմ, 1973 թ.):

Նորկրակարանյան ամենաընդարձակ տեքստերը՝ **A. Lewis and M. Gibson**, “The Palestinian Syriac Lectionary of the Gospels” (London, 1899) աշխատության մեջ են հրատարակվել: Անավարտ այլ տեքստերի մի ցուցակ պահպանվել է Ֆ. Շուլթեսի “Lexicon Syro-palaestinum” (Berlin, 1903) աշխատության մեջ:

Սուրբ Գրքի ասորերեն փարբերակների մասին հավելյալ գրականությանը կարելի է ծանոթանալ սույն գրվածքի Ա. մասի 2. ա ենթագլխի վերջում հիշատակված աշխատություններում:

ե) Ասորական գրականության պատմություն. Դժբախտաբար ցայժմ ասորերեն գրականության արդի գոհացուցիչ ներածություն չկա, և սկսնակ հետազոտողն սրիաված է բավարարվել միայն եղածով: Հավանաբար, դեռևս չգերազանցվածն ու որոշակիորեն ամենալայն ընթերցվողը Ռ. Դյուվալի “La littérature syriaque” (Paris, 3rd ed. 1907) աշխատությունն է. վերջինս նյութն ըստ ժանրերի է դիսարկում: Վ. Ռայթի “A Short History of Syriac Literature” (London, 1894) անգլերեն աշխատությունն էլ է օգտագործվում, բայց այն ժամանակավրեպ և շար աղբարիկ է. Լեյսի Օ’Լերիի “The Syriac Fathers” (London, 1909) ուսումնասիրությունն այս տեսանկյունից այդքան էլ հաջողված չէ: Ա. Բաումշտայնի “Die christliche Literaturen des Osten I” (Leipzig, 1911) ասորական գրականության բաժինը բավարարում էր միայն իր ժամանակի պահանջները, իսկ Ժ. Բ. Շարդի “Littérature syriaque” (Paris, 1934) աշխատությունը միանգամայն ողջունելի է: Վերջին շրջանի ուշագրավ աշխատություններից մեկը Ի. Օրփիզ դը Ուրբինայի “Patrologia Syriaca” (Rome, 2nd ed., 1965) հայրաբանական աշխատությունն է: Այն ավելի շուտ տեղեկագրքի մի ձև է՝ հիմնական հեղինակներին և նրանց մատենագրական վաստակն ընդգրկող մի ժողովածու. այսպեղ յուրաքանչյուր գլխին կցված գրականության ցանկը կարող է շար օգտակար

լինել: Ապագա վերահրապարակության աշխարանքներն արդեն ընթացքի մեջ են: Ա. Բաումշտարկի և Ա. Ռուբերի կողմից գերմաներենով կարարված մի ամփոփ հեղափոխություն տպագրվել է նաև “Handbuch der Orientalistik III: Semitistik” (Leiden, 1954, pp. 169-204) աշխատության մեջ:

Այս ոլորտում {22} համակարգված աշխատությունն, այնուամենայնիվ, Ա. Բաումշտարկի սրվարածավալ “Geschichte der syrischen Literatur” (Bonn, 1922, reprinted Berlin 1968) աշխատության մեջ է, որն անփոխարինելի արժեք է ասորական գրականությանը լրջորեն զբաղվող ուսանողի համար: Դժբախտաբար, Բաումշտարկի գերմանական ոճը դժվարամարս է, և հարկավոր է ծայրահեղ ուշադրությամբ ընթերցել: Բացի հրապարակություններից, Բաումշտարկը նաև իրեն հայտնի անհատ գրիչներին վերագրվող բոլոր ձեռագրերի մասին որոշակի տեղեկություններ է հաղորդում (եվրոպական գրադարաններում պահվող ասորերեն ձեռագրերի հիմնական հավաքածուների ցուցակներից միայն Մինգանայի “Catalogue of the Mingana Collection of Manuscripts” (Birmingham) հավաքածուն է, որը վերջերս է լույս տեսել):

Մեկ այլ ավելի հին աշխատություն, որը դեռևս մեծ արժեք է ներկայացնում մասնագետների համար, Ն. Ս. Ասեմանիի “Bibliotheca Orientalis” (3 vol., Rome, 1719-1728) եռհատորյակն է, որոնցից յուրաքանչյուրը նվիրված է «Ուղղափառ», «Մոնոֆիզիկ» և «Նեստորական» հեղինակներին: Այն հազեցած է նաև Վապիկյանի գրադարանում պահվող ձեռագրերից քաղված հարուստ նյութերով: 3-րդ հատորի սկզբում Մծբինի Արևելյան Ասորի Եկեղեցու Մեթրոպոլիտ Աբդիշոյի (†1318 թ.) կողմից կազմված ասորի հեղինակների և նրանց գրվածքների միջնադարյան մի կարևոր ցուցակ է տեղադրված:

Շնորհիվ վերջին շրջանում գտնված ձեռագրերի (հատկապես Մերձավոր Արևելքում պրոֆ. Արթուր Վյորուսի կողմից հայտնաբերվածները) և նոր տեսքերի կարևոր հրապարակությունների, այժմ ասորական գրականության լայնածավալ պարմության թարմացման մեծ կարիք է զգացվում: Նման մի հատոր կազմելու խոստում տվել էր հենց ինքը՝ Վյորուսը (այդ մասին հայտարարել էր 1965 թ. Նոյնում կայացած առաջին «Ասորագիտական սիմպոզիումի» ընթացքում):

Ասորական գրականության պարմության վերաբերյալ մինչ այժմ եղած բոլոր ձեռնարկներն այնպիսի տպավորություն են թողնում, որ, կարծեք թե ասորական գրականությունն անկում է ապրել մոնղոլական արշավանքներից հետո: Միայն Բաումշտարկն է հեղափոխում մի քանի հեղինակների մասին որոշ տեղեկություններ հաղորդում: Այս տպավորությունը միանգամայն սխալ է, քանի որ դասական ասորերենը շարունակել և շարունակում է կարևոր գրական լեզու լինել նույնիսկ մեր օրերում: Մինչ դասական և արդի ասորերենով (առաջին ան-

գամ օգտագործվել է ԺԷ. դարում) ստեղծված գրականությունն ընդգրկող Ռ. Մաքուլիսի “Geschichte der spät-und neusyrischen Literatur” (Berlin, 1976) աշխատության հրապարակումը, վերջին դարերի հսկայածավալ այս գրականության մասին գրեթե ոչինչ հայտնի չէր եվրոպացի գիտնականներին (այս մասին գրախոսությունը կարելի է գտնել “Journal of Semitic Studies 23” (1978, էջ 129-138) հանդեսի մեջ:

Ի վերջո, Մերձավոր Արևելքում տպագրված ասորական գրականության պատմության 3 կարևոր ձեռնարկների մասին ես հարկ ենք համարում մի քանի խոսք ասելու:

Ասորի Ուղղափառ Եկեղեցու երջանկահիշատակ պատրիարք Եփրեմ Բարսաումը “The Book of Unstrung Pearls in the History of Syriac Literature and Sciences” (1943) խորագրով ասորական գրականության պատմության արաբերեն մի ձեռնարկ է տպագրել: Ընդլայնված Բ. հրապարակությունը լույս է տեսել 1956 թ., իսկ դրա ասորերեն թարգմանությունը կատարվել է Մարդինի (Նարավարենիյան Թորքիա) հանգուցյալ մեթոդաբանի, նշանավոր գիտնական Մար Յուհաննոս Փիլոքսենոս Դոլոբանի (Mar Iuhannon Philoxenos Dolobani) կողմից, աշխատանքը հրապարակվել է 1967թ. Ղամիշլիում (Սիրիա): 1965 թ. Ամերիկայում դոկտորական թեզի գրման ընթացքում անգլերեն մասնակի մի թարգմանություն կատարել է Մ. Ի. Մուսան (Վաշինգտոնի համալսարան, միկրոֆիլմ հմր. 66-6949): Բարսաումի աշխատությունը որոշակի տեղեկություններ է հաղորդում մի քանի հեղինակների մասին, որոնք ընդգրկված չեն Բաումշտարկի մոտ, սակայն այնպեղ մերժողական միտում է նկատվում Արևելքի Եկեղեցու բոլոր հեղինակների նկատմամբ:

{23} Ալբերտ Աբունայի “Albert Abuna, Adab al-lugha al-aramiyya” (Beirut, 1970) արաբերեն աշխատությունը նույնպես ասորական գրականության ընդհանուր մի պատմություն է: Մինչ վերջերս հեղինակը դասավանդում էր Մոսուլի դպրանոցում:

Պ. Սարմասի “Tash’ita d-siprayuta atoreta” (Teheran, 1969-70) գիրքն արդի ասորերենով է տպագրված եւ ընդգրկում է Արևելքի Եկեղեցու ասորի հեղինակներին: 1972 թ. վախճանված դոկտ. Սարմասն Իրանում ասորագիտության առաջադեմ հեղինակություններից մեկն էր:

Բոլոր այս երեք աշխատությունները լավագույնս օգտագործվել են Մաքուլիսի վերոնշյալ գրքում:

Նրանց, ում հետաքրքիր են թե՛ արևմտյան, թե՛ արևելյան ասորի հեղինակների արտաքին տեսքը, խորհուրդ կտալինք ձեռք բերել Աբրոհոմ Նուրոյի “My Tour in the Parishes of the Syrian Church in Syria and Lebanon” (Beirut, 1967) խորագիրը կրող նկարների հավաքածուն: Նեղինակը, որի ընթանիքը սերում է Եդես-

սիայից, ասորերեն լեզվի ուսումնասիրման փեսանկյունից խանդավառ մի անձ է եղել: Նրա եռանդն ու ակտիվությունը սահմաններ չեն ճանաչել. թե՛ նա էր թե՛ նրա ընտանիքի անդամները փանը նույնպես դասական ասորերեն են խոսել⁵:

զ) Պատմական համալսարանը. Քանի որ ասորական գրականությունը թե՛ ժամանակի էր թե՛ փարածության առումով լայն ոլորտ է ընդգրկում, վերջինիս պատմական համալսարանին անդրադարձող որևէ պարզ աշխատություն չկա: Ասորերենի հայրենիքի՝ Եդեսիայի մասին հեղափոխական մի աշխատություն է Ջ. Բ. Սիգալի “Edessa, the Blessed City” (Oxford, 1971) գիրքը: Նեղիմակը վաղ հեթանոսական արձանագրությունների էր փյալ փարածքի մոզահիկայի ուսումնասիրման ոլորտում հեղինակություն է, էր նա վերոնշյալ գրքի սրելծման ընթացքում փեղական գրականության պատմությանը վերաբերող մի քանի հեղափոխություն էր քիչ ուսումնասիրված նյութեր էր օգտագործել:

Արևելքի Եկեղեցու (այն գոյարևել է Սասանյան փերության սահմաններում՝ մոտավորապես Իրաքի էր Իրանի փարածքում) վաղ շրջանի պատմության հեղափոխական փեսանկյունից անգլերեն երկու հիմնական աշխատություններ պետք է առանձնացնել՝ Վ. Ա. Վիգորն, «Ասորական Եկեղեցու պատմության ներածություն, 100-640 թթ.» (An Introduction to the History of the Assyrian Church, 100–640 A. D., London, 1910) էր Վ. Գ. Յունգ, «Պատրիարք, Շահ էր Մարգարե» (Patriarch, Shah and Prophet, Rawalpindi, 1974): Վիգորն Արևելքի Եկեղեցում Քենթրերի Արքեպիսկոպոսի առաքելության անդամ էր եղել էր նա, այդ Եկեղեցու ծոցում սրելծված գիտական արժեքներն անգլիախոս հասարակությանը ներկայացնելու փեսանկյունից, հսկայական աշխատանք էր կատարել: Միջագետքում (որտեղ լեզունները շատ են) քրիստոնեության սկզբնավորման ժամանակաշրջանի մասին վերոնշյալ երկու աշխատություններից էր ոչ մեկը բավականաչափ քննադատական մոտեցում չի ցուցաբերում. այդ առումով առավել արժանահավատ էր Ժ. Մ. Ֆիլեյի «Ուրվագիծ Իրաքի եկեղեցու պատմության» (Jalons pour une histoire de l’Eglise en Iraq, Louvain, 1970) աշխատությունը, որն ընդգրկում էր սկզբից մինչև Է. դարն ընկած շրջանը: Նույն ժամանակաշրջանին վերաբերող առավել մանրակրկիտ էր հիմնավոր մի աշխատություն էր Ժ. Լաբուռի «Քրիստոնեությունը Պարսից Տերության մեջ» (Le christianisme dans l’empire perse, Paris, 1904) {24} գիրքը, որը դեռևս չի կորցրել իր արժեքը: Արասյան խալիֆայության փրկապետման ժամանակահատվածում այս Եկեղեցու ծաղկման շրջանի պատմության հեղափոխական համար, բացի Յունգի գրքից, հեղափոխ-

⁵ Աբրոհոմ Նուրո (Abrohom Nouro Malfono) Մալֆոնոյի (Ուսուցիչ) հեղափոխական պարիվին ինձ ընձեռնել էր վաղ առավոտյան Շառֆեյի (Լիբանան) ասորի կաթոլիկ պարիարքարանում, երբ գիշերում էր այնտեղ: Վերջինս, եվրոպացի ասորագետի (ասոր. մեսթարյոնո) ժամանման մասին պարիվող շշուկները լսելով, Բեյրութից սովորմեքենա էր վարձում էր արեսածագից առաջ հայրնվում պարիարքարանում:

րական է Ն. Փութմանի «Եկեղեցին և իսլամը Տիմոթեոս Ա.-ի (780-823 թթ.) օրոք» (*L'Eglise et l'Islam sous Timothee I (780-823)*, Beirut, 1975) խորագիրը կրող ուսումնասիրությունը: Մոնոլիական ժամանակաշրջանը (ԺԳ.-ԺԴ. դարեր) լավագույնս ներկայացված է Ժ. Մ. Ֆիլեյի «Քրիստոնյա ասորիները մոնղոլների օրոք» (*Chrétiens syriaques sous les Mongols*, Louvain, 1975) փոքրիկ գրքում: Ի վերջո Արևելքի Եկեղեցու պարամության մասին լավագույն ուսումնասիրությունը կապարվել է հանգուցյալ կարդինալ Ի. Տիսսերանտի կողմից՝ «Կաթոլիկ Աստվածաբանության Բառարան» աշխատության մեջ փնտռված «Նեստորական Եկեղեցի» (*Cardinal E. Tisserant, article "Nestorienne, Église", Dictionnaire de Théologie Catholique*) հոդվածով:

Ասորի Ուղղափառ Եկեղեցու՝ որպես առանձին կազմակերպության, առաջացման ժամանակաշրջանը՝ Ե.-Ջ. դարերը, ներկայացված է Վ. Ն. Ս. Ֆրենդի «Մոնոֆիզիկ շարժման ծագումը» (*The Rise of the Monophysite Movement*, Cambridge, 1972) և Վ. Ա. Վիգդենի «Մոնոֆիզիկների Բաժանումը» (*The Separation of the Monophysites*, London, 1923) աշխատություններում. վերջինը հարկապես, հիմնված լինելով քիչ հայրնի ասորական սկզբնաղբյուրների վրա՝ արժեքավոր է 6-րդ դարի պարամության լուսաբանման փեսանկյունից:

Արաբական ժամանակաշրջանի վերաբերյալ լավագույն աշխատությունները միայն գերմաներեն են՝ Վ. Նագել, «Ասորի Նակորիկյան Եկեղեցին իսլամական դարաշրջանի սկզբին» (*Die syrisch-jakobitische Kirche in fruhislamischer Zeit*, Wiesbaden, 1966) և Փ. Կավերաու, «Նակորիկյան Եկեղեցին Ասորական Վերածննդի ժամանակաշրջանում» (*Die jakobitische Kirche im Zeitalter der syrischen Renaissance*, Berlin, 2nd ed., 1960). վերջինը վերաբերում է ԺԲ.-ԺԳ. դարերին:

Երկու հեղինակներ, մասնավորապես, մեծ ներդրում ունեն Ասորական Եկեղեցիների պարամա-աշխարհագրական պարկերացումների ձևավորման գործընթացում. Ի. Նոնիգմանն իր «Ա.-Ջ. դարերի Ասիայի երկրների Մոնոֆիզիկ Եպիսկոպոսներն ու Թեմերը» (*Évêques et Evêchés monophysites d'Asie antérieure au VI^e siècle*, Louvain, 1951) և «Բարսաումայի վանքն ու Անյոթիքի և Սիրիայի Նակորիկյան Պարրիարությունը» (*Le Couvent de Barsauma et le Patriarcat jacobite d'Antioche et de Syrie*, Louvain, 1954) աշխատություններում անդրադարձել է Միջագետքի փարածաշրջանին, իսկ Ժ. Մ. Ֆիլեյն իր «Քրիստոնյա Ասորեստան» (*Assyrie chrétienne*, 3 volumes, Beirut, 1965-68) և «Մծբին» (*Nisibe*, Louvain, 1977) գրքերում Նեոստոր Արևելքն (մոլորավորապես Իրաքի ներկա տարածքը) է ներկայացնում: Ասորական գրականության ուսումնասիրման փեսանկյունից չափազանց հերաքրքիր է Ջ. Սպենսեր Տրիմինգհամի «Քրիստոնեությունը արաբների մոլոր նախախաղմական ժամանակաշրջա-

նում» (J. Spencer Trimingham, Christianity among the Arabs in Pre-Islamic Times, London, 1979) աշխատությունը:

Է) Մարենագիտական օժանդակ միջոցներ. Առանձին հեղինակների համար կողմնակի գրականության մասին տեղեկության ամենահարմար աղբյուրն Օրիգ դը Ուրբինայի «Ասորական հայրաբանություն» է (Ortiz de Urbina, Patrologia Syriaca, 2nd ed., 1965): Բացի այդ, Կ. Մոսսի «Ասորերեն հրապարակված գրքերի և Բրիտանական թանգարանի հարակից գրականության մարենագիտություն» (Catalogue of Syriac Printed Books and Related Literature in the British Museum, London, 1962) գիրքն ամենից առաջ ասորագիտական նյութերի մարենագիտության հասանելի երկեր է պարունակում. աշխատանքն ընդգրկում է սկզբից մինչև 1959-ը ընկած ժամանակահատվածը: 1960-1970 թթ. ընդգրկող հավելյալ մարենագիտություն (բայց այլ դասակարգությամբ) կարելի է գտնել իմ «Ասորագիտական ուսումնասիրություններ 1960-1970 թթ. դասակարգված Մարենագիտություն» աշխատության մեջ (Parole de l'Orient 4, 1973, էջ 393-465). 1971-1980 թթ. միջև ընկած շրջանն ընդգրկող հավելվածը նախապարտապական փուլի մեջ է:

Նեսթլեի «Ասորերենի քերականության» մեջ զետեղված մարենագիտությունը, ասորերեն տեքստերի հնագույն հրապարակությունների ցուցակի շնորհիվ, դեռևս կիրառելի է:

{25} Համառոտ, բայց և մեծ ծավալով տեղեկություններ է պարունակում Ջ. Ասաֆալզի և Պ. Կրյուգերի «Քրիստոնյա Արևելքի փոքր բառարան» (Kleines Wörterbuch des christlichen Orients, Wiesbaden, 1975) աշխատությունը, որտեղ մարենագիտական ցանկերը զետեղված են ամբողջությամբ:

Ը) Գիտական շարքեր ու պարբերականներ. «Ասորի հեղինակներ» շարքն իր արժանի տեղն է գրավել «Արևելյան Քրիստոնյա հեղինակների ժողովածուի» (Corpus Scriptorum Christianorum Orientalium) մեջ, որը հրապարակվել է 1903 թ. Լյուվենում. 1978 թ., ընդհանուր առմամբ, ասորերեն շարքերի 174 հատորներ են տպագրվել (N^o 173-174-ում տեղադրված տեքստերը խմբագրվել են սույն հատորների ընդհանուր խմբագիր պրոֆ. Ռ. Դրագեի (R. Draguet) կողմից): Յուրաքանչյուր տեքստի (Էստրանգելի գրապետակով) և թարգմանության (լատիներեն, գերմաներեն, ֆրանսերեն կամ անգլերեն) համար նախատեսված ծավալն առանձին մի հատոր է կազմում:

Ասորերեն տեքստերի մի մեծ շարք հրապարակվել է Ռ. Գրաֆանի (R. Graffin) կողմից հիմնադրված, իսկ այժմ նրա եղբորորդու՝ Ֆ. Գրաֆանի (F. Graffin) կողմից խմբագրվող «Patrologia Orientalis»-ում: Մինչև 1978 թ. ընդհանուր հաշվով 39 հատորներ (յուրաքանչյուր հատոր մի քանի գրքերից է կազմված) են լույս տեսել: Այս շարքերում թարգմանությունը (այժմ, որպես կանոն, ֆրանսերեն) կամ

դրված է Կրեքսի դիմաց, կա՛մ (առավել հին հատորներում) փեղադրված է դրա փակ:

Ռ. Գրաֆանը նաև գիտական մեկ այլ շարք է հիմնադրել՝ «Ասորի հայրեր» խորագրով (չպետք է շփոթել միևնույն վերնագրով փալագրված Օրփիզ դը Ուրբինայի ասորական գրականության պատմության հետ), որի 3 հատորներն են միայն լույս տեսել:

Պետք չէ մոռանալ սեփական նախաձեռնությամբ ասորի հեղինակների հսկայական մի փաղանգ խմբագրած Լազարիս Զայր Փոլ Բեդյանի (Paul Bedjan, 1838-1920 թթ.) աշխատանքը: 1888-1910 թթ. ընկած ժամանակահատվածում նա գեղեցիկ արևելաասորական գրադասակով ասորերեն Կրեքսների ավելի քան 15 հատորներ է հրատարակել (ամեն մեկը հաճախ ավելի քան 500 էջի հասնող) Վ. Դրուգուլինի (W. Drugulin) հրատարակչաբանը՝ Լայպցիգում:

Ասորագիտական ուսումնասիրություններում Բեդյանի կարարած ներդրման գնահատականը տվել է Ժ. Մ. Վոստեն (J. M. Voste) «*Orientalia Christiana Periodica* II»-ում (1945 թ., էջ 45-102):

Վերջերս Գյոթինգենի համալսարանի արևելյան ֆակուլտետում փալագրված «Ասորական շարքը» (Reihe Syriaca, մինչև 1978 թ.՝ 16 հատորներ) գրամեքենայով է կրկնօրինակվել. ասորական Կրեքսների համար Նոլանդիայում ստեղծված էստրանգելո փառապետակով գրամեքենան է օգտագործվել (գոյություն ունեցող ասորաբան 3 գրամեքենաներից մյուսը՝ արդի արևելաասորական փառապետակով, Գերմանիայում է ստեղծվել եւ արդի ասորերենով Կրեքսներ փալագրելու նպատակով օգտագործվել է Ռ. Մաքուխի (R. Macuch) եւ Ի.Պանուսի (E. Panoussi) կողմից կազմված հավաքածուներում):

Երբեմն բացառապես ասորագիտական ուսումնասիրություններին նվիրված պարբերականներ են հրատարակվել, իսկ ներքոնշյալներն այն հիմնական պարբերականներն են, որտեղ ասորերեն Կրեքսներն ու ասորագիտական հոդվածներն են հաճախ լույս տեսել (ցուցակն այբբենական կարգով է տրված). {26}

ա) *Analecta Bollandiana* - Այս պարբերականը մասնագիտացած է վարքաբանական Կրեքսների մեջ (ցանկացած լեզվով), որոնք փալագրվել են Բրյուսելում Բոլլանդիստների պարվարժան եւ գիտական հասարակության կողմից:

բ) *Journal/Bulletin of the Syriac Academy Baghdad* - Ասորական Ակադեմիան հիմնադրվել է Բաղդադում այն բանից հետո, երբ Իրաքի կառավարությունն ասորերենը որպես երկրի ճանաչված մշակութային լեզու հռչակեց (1972 թ. ապրիլի 22-ի դեկրետով): Չնայած որ հոդվածների մեծ մասն արաբերեն է (անգլերեն ամփոփագրերով), այնուամենայնիվ, յուրաքանչյուր շարք անգլերենի համառոտ բաժին ունի՝ արևմտյան գիտնականների հոդվածներով: Բ. եւ Գ. հատորները,

հապկապես, Իրաքի ասորերեն արձանագրությունների կարևոր ժողովածուներ են պարունակում (խմբ. Պ. Հադդադ-P. Haddad):

գ) Le Muséeon - հավաքածուներից շարքերն ասորերեն համառոտ փերսյան են պարունակում: Այժմ ողջ շարքն ընդգրկող երկու ցուցակներ կան՝ սկզբից՝ 1882-1931 թթ., եւ այդ ժամանակից էլ մինչև 1973 թ.:

դ) Oriens Christianus - այս պարբերականը տպագրվել է 1901-ից սկսած եւ երկար ժամանակ այն խմբագրվել է Ա. Բաումշտրակի կողմից:

ե) Orientalia Christiana Periodica - հրատարակվել է Պապական Արևելագիտական Ինստիտուտի կողմից, Հոռնում: Orientalia Christiana Analecta խորագրի ներքո մենագրությունների առանձին շարքեր կան տպագրված (որոնցից 197-րդ եւ 205-րդ համարները 1972 թ. եւ 1976 թ. տեղի ունեցած Ասորական սինյոդիումների ընթացքում ներկայացված փաստաթղթեր են պարունակում):

զ) Orientalia Lovaniensia Periodica - տպագրվել է 1970-ից սկսած Լյովենում՝ Արևելագիտական Ուսումնասիրությունների Ֆլամանդախոս Դեպարտամենտի կողմից, հոդվածներն անգլերեն, ֆրանսերեն եւ գերմաներեն լեզուներով են:

է) L'Orient Syrien- այս պարբերականը 1956-1967 թթ. խմբագրել է փարիզաբնակ ասորի կաթոլիկ բորեախկոպոս Նորին Սրբազնություն Գաբրիել Խուրի-Սարգիսը: Հոդվածները (բոլորը ֆրանսերենով), ընդհանուր առմամբ, «վեհ շարունակականության» հիանալի օրինակներ են եւ ասորերեն փերսյանի շարթագմանություններ են ընդգրկում: Մի ցուցակ էլ «Mémoial Mgr. G. Khouri-Sarkis»-ում կա:

ը) Parole de l'Orient - Հրատարակվել է Կապիկի Ս. Հոգու Մարոնիտ Համալսարանի կողմից, Լիբանանում, հոդվածները սովորաբար ֆրանսերենով են եւ մեծ մասն առնչվում է ասորագիտական թեմաներին: Parole de l'Orient-ի (կամ, օգտագործենք դրա ասորերեն անվանումը՝ Մելթո դ-Մադնիո) առաջին համարը լույս է տեսել 1970 թ.,՝ որպես, 1965-1969 թթ. հրատարակված «Մելթո, Արևելյան Հետազոտությունների» (“Recherches orientales”) իրավահաջորդ (ցուցակը գերելով է Parole de l'Orient 1-ում):

թ) Revue de l'Orient Chrétien - Ռ. Գրաֆանի կողմից խմբագրված այս արժեքավոր պարբերականը լույս է տեսել 1896-1946 թթ., որի յուրաքանչյուր Ժ. հատորի վերջում տեղադրված են առանձին ցուցակներ:

5. Վերջաբան. Ձեռագրերի բերկրանքը. Բրիտանական Գրադարանի Արևելագիտական ուսումնասիրությունների սենյակում նախելն ու «այս հատորը ավարտվել է 723 թ. Թեշրի Բ. ամսում, Ուռհայում՝ Բեթ Նահիրինի մայրաքաղաքում» բառերի, ինչպես նաև Սասանյան դարաբանի առջև որպես վկա հանդես եկած Մարտիրոսյուսի եպիսկոպոս Մարութայի կողմից Սելեկիա-Կրեսիֆոնից երբ բերված Պարսից մարտիրոսների անվանացանկերի եւ թվագրված ասորե-

րեն ձեռագրերից {27} հնագույնի (-Քրիստոնեական դարաշրջան՝ 411 թ.) ընթերցումը, ինչ խոսք, հուզիչ փորձառություն է: Ինչ-որ մեկին վառ երևակայություն հարկավոր չէ՝ ժամանակով եւ տարածությամբ 411 թ. նոյեմբեր ամսի Եղեսիա քաղաք մտնողի տեղափոխվելու համար:

Առաջին ձեռագիրը, որ երբեւէ բախար եւ ունեցել Բեյրութ կայսրաւ այցելության ընթացքում վերադառնալու, բավականին աղավաղված եւ պարտաւորված մի հարված է եղել. չնայած որ այն մի քանի հարյուր տարվա հետքեր ունի, այնուամենայնիվ, Ե. դարի Մարկիանոս կայսեր անվան հիշատակմամբ իմ հետաքրքրասիրության շրջանակն ընդլայնվեց: Տուն վերադառնալով՝ ես կարողացա պարզել, որ տեքստը 449 թ. Եփեսոսի Բ. ժողովի ընթացքում իր ընդդիմադիր աստվածաբաններին հաղթած մոլեռանդ վանական Բարսումայի վարքի մի հարվածն է պարունակում: Այս շար փոքր բացահայտումից հուզմունքը պարեց ինձ, բայց, բարեբախտաբար, ասորերեն ձեռագրեր ուսումնասիրելու համար այսօր սրիվաված չենք Մերձավոր Արեւելք հասնելու ֆինանսական դժվարություններ կրելու: Այնպես է սրացվել, որ աշխարհում ասորերեն ձեռագրերի ամենամեծ պահոցներից երկուսը Լոնդոնում եւ Բիրմինգհեմում են գտնվում: Բիրմանական Գրադարանի բազմաթիվ ասորերեն ձեռագրերը բացառապես հին են, մի քանիսը նույնիսկ Ե.-Ջ. դարերի ժառանգություն են. բարեբախտաբար դրանք մինչեւ ԺԹ. դարակեսն Ալեքսանդրիայի եւ Կահիրեի միջեւ գտնվող Նիսիսի անապատի ասորական վանքում են պահպանվել: Մելլի Օաք Քոլեջների Գրադարանին (Բիրմինգհեմ) պատկանող Մինգանայի կազմած ձեռագրերի հավաքածուն մի կողմից նոր է (1932 թ.), սակայն, այնուամենայնիվ, մի քանի ասորերեն տեքստեր է պարունակում, որոնք չկան արեւմտյան մյուս գրադարաններում: Դրանք հավաքվել են Ալֆոնսո Մինգանայի (նրա քերականության մասին քիչ առաջ նշեցինք) կողմից՝ մեծահոգի Էդվարդ Բեդֆորդի (Edward Cadbury) ֆինանսավորմամբ Մերձավոր Արեւելք կայսրաւ երկու ճանապարհորդությունների ընթացքում:

Ասորի գրիչները հաճախ են հետեւել հին Միջագետքի վաղուց ձեւավորված հնագույն ավանդությանը. նրանք, արտագրելով տեքստերի վերջում դրված հիշատակարանները, իրենց անձերի, ձեռագրի գրության թվականի եւ վայրի մասին մանրամասն տեղեկություններ էին հավելում, իսկ ձեռագրի ազատ մնացած էջերը հիմնականում այն վնասողներին ուղղված նզովքներով էին լրացվում: Իրենց ապրած ժամանակի որոշ դեպքերի համառոտ նկարագրության պատճառով նրանք կարող էին աղքատության եւ մեծության մեջ ապրել: Արաբների կողմից Պաղեստինի նվաճման վերաբերյալ մի հարված հայտնաբերվել է Բիրմանական Գրադարանում պահվող 6-րդ դարի ձեռագիր Ավերարանի պղծված մի թերթի վրա: ԺԹ. դարավերջին Մինգանայի կողմից գտնված ձեռագրի գրիչն,

օրինակ, մեզ կենդանի մի պարամություն է ներկայացնում՝ մի քանի էջերի սահմաններում նկարագրելով 1895-96 թթ. հարավարևելյան Թուրքիայում ասորի ուղղափառ համայնքների ապրած ջարդի տեսարանները:

Ճակարագրերն իրենց սեփական գրքերն ունեն (Habent sua fata libelli): Նկարագա պարվիրարությունը, ինչպես նաև հենց իրենք՝ գրիչները, երբեմն իրենց անունները ձեռագրերում ավելացնելուն զուգահեռ նշել են նաև սեփական աշխատանքի դիմաց վճարված դրամի քանակը: Նմանաբիպ մի պարվիրար, ով անգնահատելի ծառայություն է մատուցել ասորագիրությանը, Եգիպտոսի ասորական վանքերից մեկի վանահայր Մովսես Մծբնացին է եղել: 926 թ. հետո նա գնացել է Բաղդադ՝ իր և եգիպտական մյուս վանքերի առջև ծառացած հարկային խնդիրների լուծման նպատակով Խալիֆի առջև միջնորդելու համար: Նկարագրի ճանապարհին (932 թ.) {28} նա, Միջագետքի քաղաքներ վանքեր այցելելով, այնպիսի ասորերեն գանազան ձեռագրեր է գտել, ինչի արդյունքում տեքստերի հիասթափ մի հավաքածու է ստեղծվել, որն այսօր Վատիկանում և Բրիտանական Թանգարանում պահվող ձեռագրերի (ԺԸ. դարասկզբին հայտնաբերված և Վատիկանում ցայժմ պահվող ձեռագրերից մի քանիսը դեպի Տոմ ուղևորվելու ճանապարհին տեղի ունեցած անհաջողության (ձեռագրեր պարունակող բեռը Նեղոս գետին էր ընկել) հետքերն են կրում) կորիզն է հանդիսանում: Մովսեսի հոյակապ գրադարանի բովանդակությունը, ձեռագրերի ձեռքբերման վերաբերյալ նրա բազմաթիվ գրառումների օգնությամբ, վերականգնվել է Ն. Էվելինի «Նիտրիայի վանքերի և ճգնավորների պարամությունը» (The History of the Monasteries of Nitria and Scetis, New York, 1923) աշխատությամբ:

Չնայած որ Բրիտանական թանգարանի փնտրիչությունն սրիպեց հավաքալ Էլիաս Ասեսմանի կողմից 1707 թ. վերոնշյալ վանքում թողնված ձեռագրերի գնման իրողությանը, այնուամենայնիվ, ներկա պահին հայտնի է, որ մի քանի տասնյակի հասնող ասորերեն հին ձեռագրեր դեռևս մնացել են վանքի ապահով մի վայրում՝ վանահոր խցում: 1978/1979 թթ. ձմռանը հեռավոր անապատային վանք կատարած երկու այցելությունների (մեկն ավագամրիկով ավարտվեց) ընթացքում վանահայրը, ում մոտ պահվում էր բանալին, հաջողությամբ խուսափում էր ինձանից:

Մյուս կողմից, արդի հնասերների մոտ ձեռագրի ծագման մասին վկայող ցանկացած փաստ ոչնչացնելու ցանկություն է դրսևորվում:

Մինգանայի հավաքածուի մեջ հնագույն ձեռագրերից մկրարով կտրված պարզ էջերի մի խումբ է պահպանվել, սակայն որոշ դեպքերում՝ տեսանելի կերպով: Դրանք կարելի է ի մի բերել՝ միայն բնօրինակ ձեռագրի հետ համեմատելով: Նամենայն դեպս պարզ է, որ վերոնշյալ բոլոր հարվածներն էլ Սինա լեռան վրա գրվող Սբ. Կատարինե վանքի ինչ-որ ձեռագրից են վերցված: Ապացուցվել է

նաև, որ դրանց մի մասը Է. դարի ասորի միսրիկ մրաժող Սահդոնայի (կամ Մարպյուրիուս) աշխարությունները պարունակող եզակի մի ձեռագրի հայրվածներն են, որոնք այսօր պահվում են Բիրմինգհեմի, Սրբասբուրգի, Լենինգրադի և Միլանի գրապահոցներում: Բարեբախտաբար հայրնի Է, որ այդ բարբարոսը Մինգանան չի եղել. բոլոր այս հայրվածները նա գնել է փարիզաբնակ մի առևտրականից: Տարբեր գրադարաններում գտնվող և անհայտ մնացած էջերի հայրնաբերման և վերամիավորման հնարավորությունը կարող է անսպասելի և ժամանակաւոր հետեւանքներ ունենալ: Պարզվում է՝ ինչ-որ մեկը ցանկանում է ինձ մեկ ամբողջական գրքի ստեղծման գործընթացի մեջ ներգրավել: Բայց դա բիզնեսի թովիչ մի մասն է միայն:

Եւրոպական և Ամերիկյան գրադարանները սովորաբար լավ ցուցակագրված են, բայց ձեռագրացուցակները ոչ միշտ են տվյալ ձեռագրի իրական բովանդակության բուն էությունը ներկայացնում: Ես երբեք չեմ նայել «Մաքսիմոս Խոստովանողի նահապետության սկիզբը» (*Initium martyrii Maximi Palaestinisensis*), քանի որ հետաքրքրված չեմ եղել նույն ձեռագրի տեքստի մեկ այլ հայրվածով, բայց այս մեկը, պարզվեց, զարմանալի փաստաթուղթ է՝ Մաքսիմոս Խոստովանողի (†622 թ.) կյանքի վաղ շրջանին վերաբերող մի գրվածք, որն ակնհայտորեն, վերջինիս մահվանը հաջորդած մի քանի տասնամյակների ընթացքում նրա հակառակորդ աստվածաբանների կողմից է շարադրված: Ապացուցվել է նաև, որ ձեռագիրն ավելի հին՝ Մարոնիսի մի տեքստի շատ բացառիկ օրինակ է, և այն, ի դեպ, որոշակի լույս է սփռում հենց իրենց՝ Մարոնիսիների չափազանց անորոշ ծագման վրա:

Մերձավորարևելյան գրադարանների պարագային, որոնց համար ձեռագրացուցակները բացառիկ երևույթներ են, անկանխատեսելի բաներ կարող են պարահել (առաջին հերթին անհրաժեշտ է հասանելիություն ապահովել): Թե ինչ գանձեր դեռ կարող են գտնվել այս հավաքածուների գնման արդյունքում, կարելի է իմանալ պրոֆ. Վյորուսի հայրնաբերած ձեռագրերի երկար ցուցակից, (սեփական {29} հրապարակությունների մատենագիտությունը, որը գեղեցիկ է վերջերս իր պարզիկ լույս տեսած «Նոդվածների ժողովածուի» մեջ, 50 մենագրություններ և 200 հոդվածներ է ընդգրկում):

Մի հուզիչ դեպք պարահել է իմ անձնական փորձառության ընթացքում, երբ Դամասկոսում Ասորի Ուղղափառ Եկեղեցու պարիիարքի քարտուղարության գրասենյակում սուրճի փոքրիկ սեղանին անհուսալիորեն հենված ժամանակ պարահաբար ԺԲ. դարի մեծանուն պարիարք և ժամանակագիր՝ Միքայել Ասորու կողմից կրկնօրինակված՝ սրբոց վարքերի երկու սովորաձուլ հայտրները նկատեցի: Նաջող այցելության ընթացքում պարիարքը՝ Նորին Սրբութ-

յուն Մար Իգնատիոս Յակոբ Գ.-ը, հակառակ դրսևորված դժգոհության ալիքին, գրադարանում աշխատելու արտոնություն րվեց ինձ:

Սովորաբար միայն եպիսկոպոսական ավելի մեծ գրադարաններում կարելի է իրապես հին ձեռագրեր գտնել, բայց գրեթե յուրաքանչյուր գյուղական եկեղեցի ծխական բնության ձեռագրերի փոքրիկ հավաքածուներ ունի (տպագրված գրքերի գրեթե մեծ մասը եկեղեցական արարողությունների ընթացքում չի օգտագործվում): Դրանց հիշարակարանները կարող են տեղական պատմության համար անգին աղբյուրներ հանդիսանալ: Արտատվող երկար հիշարակարանները՝ «Fenqitho», (մոտավորապես արեւմտյան ծխարաններին համարժեք), որոնք վերջերս տեսա Թուր Արդինում՝ Ասորի Ուղղափառ Եկեղեցուն պարկանող Մար Գաբրիելի վանքում, հաղորդում են, թե ինչպես է սկզբում՝ 1838 թ., ձեռագիրը գրվել Մար Գաբրիելի Զայթուն անունով մի վանականի կողմից, իսկ հետո, կողոպուտների արդյունքում, 120 տարի անուշադրության հետևանքով մոռացության մատնվել: Նավանաբար 1915 թ., որը տեղական ավանդության մեջ կոչվել է «սրի տարի», վերոնշյալ ձեռագիրը, որպես ավար, մահմեդականների ձեռամբ վերցվել է վանքից. ի վերջո 1929 թ. Գետրգ կիսասարկավագին է վերադարձվել. վերջինս հետագայում այն նվիրել է Կեֆերցեի (նույնպես Թուր Արդինում) գյուղական եկեղեցուն, որտեղ ձեռագիրը պահվել է մինչ վերջերս, երբ Մար Գաբրիելի ներկա վանահայր Ռաբբան Սամուել Ակթաշը եւ տեղի վանական դպրոցի տնօրեն Մալֆոնե Իսա Գյուլջան այցելեցին եկեղեցի եւ, հիշարակարանը կարդալուց հետո, նրանք Եկեղեցու համար պատճենված մեկ այլ «Fenqitho» ունենալու շուրջ համաձայնության եկան: Այսպիսով, 1838 թ. ձեռագիրը (վայելագրության հիանալի մի նմուշ) իր բնօրրանն է վերադարձվում, որտեղ այն գտնվում է մշտական խնամքի տակ: Շատերին կգարմացնի Մերձավոր Արեւելքում ասորերեն ձեռագրերի կրկնօրինակման շարունակական գործընթացի փաստը: Տպագրման հնարավորությունը հազվագյուտ բան է, իսկ Վիկտորյա թագուհու կողմից նվիրաբերված տպագրական սարքը, որն օգտագործում էր Մարդինի ասորի ուղղափառ երջանկահիշարակ մեքրոպոլիտ Մար Յուհաննոն Դոլորանին՝ ասորերեն տեքստեր հրատարակելու համար, այժմ բռնագրավված է՝ տեղական թուրքական թերթում օգտագործելու նպատակով: Արտագրող գրիչները հիմնականում սարկավագներ, հոգևորականներ կամ վանականներ են. հայր Բուրբուս Օյգյունը՝ Ասորի Ուղղափառ Եկեղեցու դավանանքին հարած Գերմանիայի փախստական թուրքերի հոգևոր հովիվը, ում ես առաջին անգամ հանդիպել եմ Թուր Արդինի Միդյաթ փոքր քաղաքում, երբ վերջինս դպրոցի տնօրենն էր, 30 տարեկան հասակում արդեն մոտ 100 ձեռագիր էր պատճենել: Եթե մեկը նման մարդկանց հանդիպելու հնարավորություն ունենա, շատ արագ

կհասկանա, որ աստրերեն սովորել նշանակում է ուսումնասիրել կենդանի մի ավանդություն {30}:

6. Նավելված

Ասորալեզու Եկեղեցիներ. Ասորական գրականությունը սերտորեն կապված է եկեղեցու պարամության հետ, իսկ փարաբնույթ անունների բազմազանությունը, որոնք փրվում են Ասորալեզու Եկեղեցիներին, մոլորությունների առաջացման պարճառ են հանդիսանում (նույնիսկ ամենավարահելի արդի աշխարություններում): Դրանց առաջացումը պայմանավորված է հինը չհասկանալու և թեմայի նոր ուսումնասիրողների ասարվածաբանական գիտելիքների մակարդակի փաստով:

Նախ և առաջ աղյուսակի օգնությամբ անհրաժեշտ է հստակեցնել խառնիճաղանջ մի քանի եզրեր.

Պաշտոնական անունը	Ճանաչված որպես	Այլ (երոպական) որակումներ	Ունիաթ (Տոմի հետ հաղորդության մեջ)
Ասորի Ուղղափառ Եկեղեցի	Արեւմտյան Ասորիներ	Մոնոֆիզիտ, Նակորիկյաններ	Կաթոլիկ Ասորիներ
Արեւելքի Եկեղեցի (վերջին շրջանում՝ Արեւելքի Ասորական Եկեղեցի)	Արեւելյան Ասորիներ	Նեստորականներ, ասորեստանացի	Քաղղեացիներ

1. Քաղղեացիներ. «Նեստորական» և «Մոնոֆիզիտ» եզրերն ի սկզբանե հակադիր դրույթներ են և հերերիկոսական պարկերացումներ են ենթադրում: Որպես այդպիսին, դրանք ապակողմնորոշիչ են, և հարկավոր է խուսափել դրանց կիրառումից: «Նակորիկյան» եզրի ակունքը կապված է Նակոր Բարադետի (Շանձադոս) անվան հետ, ով Ջ. դարի կեսերին վերակազմակերպել է Ասորի Ուղղափառ Եկեղեցին: Մի ժամանակաշրջան, երբ Նուսրինիանոս կայսրը փորձում էր վերացնել վերջինիս նվիրապետական համակարգը: «Ասորեստանացիներն» այսօր սփռված են Մերձավոր Արեւելքում, իսկ գաղթօջախների (չնայած որ դրանք «ազգային» ինքնության պահպանման ձգտումներ են դրսևորում), ներկա դերակատարության համապարկերը ծնունդ է ժԺ. դարի որոշ հնագետների և միսիոներների այն ենթադրության, թե Նյուսիասյին Իրաքի արդի քրիստոնյա բնակչությունը (մեծավ մասամբ արեւելյան ասորիները) հին ասորեստանացիների սերունդներն են: Ազգային պարճառներով ասորի աշխար-

հականների մի սրվար հարվածն այժմ իրեն ասորեսարանցի է անվանում, ինչն էլ շփոթմունքի առաջացման պարճառ է հանդիսանում (ներկայիս իրենց երեխաներին քրվող այլ անունների շարքում փարածված են նաև Սարգոն, Նամմուրաբի և ասորեսարանյան այլ անուններ): Արեւելյան փարբեր եկեղեցիների միջև գոյություն ունեցող բաժանումներն, ըստ էության, փարաբնույթ հիմնավորումներով Ե. դարի քրիստոսաբանական վեճերի արդյունք են: 431 թ. Եփեսոսի և 451 թ. Քաղկեդոնի Ժողովները պարարտ հող են սպեղծել այդ վեճերի բռնկման համար: Քրիստոնեական ավանդական եկեղեցիները՝ Արեւելյան Ուղղափառ Եկեղեցիները (Նույն, Ռուս և այլն), Մարոնիք և Նոմենակաթոլիկ Եկեղեցիները, ինչպես նաև Արեւմտյան փարբեր Եկեղեցիները երկու ժողովներն էլ ընդունում են, այն դեպքում, երբ Արեւելքի Եկեղեցին մերժում է Եփեսոսը և ընդունում Քաղկեդոնը, իսկ Ասորի Ուղղափառ Եկեղեցին (ի շարս «Նին Արեւելյան այլ Եկեղեցիների»՝ Նայ, Ղպրի, Եթովպական) ընդունում է Եփեսոսը և մերժում Քաղկեդոնի ժողովը:

{31} Նարցը դիարակենք ասարվածաբանական փեսանկյունից: Արեւելքի Եկեղեցին, Քրիստոսի ասարվածային և մարդկային բնությունների միջև կտրուկ փարբերություններ սպեղծելով, ասարվածաբանական խնդրի մի կողմն է ներկայացնում միայն՝ (արդյունքում նրանք չեն ընդունում Մարիամի Թեոթոկոս՝ «Ասարվածածին» փիղղոսը, դրա փոխարեն նրանք Ս. Կույսին Քրիստոսածին են անվանում): Քրիստոնեական ավանդության հիմնական առանցքը դավանաբանական դիրքորոշման ոսկե միջինն է կազմում, բայց նույնպես իրական աննշան փարբերություն է դնում երկու բնությունների միջև: Ասորի Ուղղափառ Եկեղեցին հարցի մյուս կողմն (բայց ոչ մի դեպքում ծայրահեղ) է ներկայացնում: Նրանք մարմնացյալ Քրիստոսի անձի մեջ միայն երկուսից «կազմված» մի բնություն են փեսնում: Ըստ այսմ, Քրիստոսի մեջ ցանկացած փեսակի դուալիզմի ներկայություն կապականի Մարդեղության խորհրդի ողջ իրականությունը: Ճակարագրի հեզնանքով, հավարտ քաղկեդոնյան բանաձեւումը, որը վերջանում էր հայրաբարությանմբ՝ մարդացյալ Քրիստոս գոյում է «երկու բնությամբ», իր նախնական փարբերակի փեքսում «երկու բնությունից» բանաձեւումն է ունեցել, մի բանաձեւ, որը լիարժեք կերպով ընդունելի է Նին Արեւելյան Ուղղափառ Եկեղեցիների կողմից: Այսպեղ կտրուկ կերպով պեքք է ընդգծվի այն, որ, հակառակ արեւմտյան գիտական շրջանակներում շրջանաժող փեսակերի, Ասորի Ուղղափառ Եկեղեցին Քրիստոսի մեջ «մի է բնութիւն...» բանաձեւման փակ նկարի չունի մարդկայինն իրեն ձուլած ասարվածային բնությունը. սա եվրիքյան ընկալում է, որը, որպես լիակարար հերերիկոսություն, միշտ դարապարպել է Ասորի Ուղղափառ Եկեղեցու կողմից: Ներուաբար, ի հակադրություն «Դիոֆիզիպ» Եկեղեցիների, որոնք ընդունում են Քաղկեդոնը, Նին Արեւելյան Ուղղա-

փառ Եկեղեցիներին բնութագրելիս՝ ճիշտ կլինի «Մոնոֆիզիտ» եզրի փոխարեն օգտագործել «Նեոֆիզիտ» («Միաբնակ», այսինքն՝ բնությունների միություն ընդունող) արմատները:

Այժմ համառոտ ներկայացնենք ասորական մշակույթին պատկանող մյուս 3 եկեղեցիները:

2. Ասորի Ուղղափառ Եկեղեցի. Ասորի Ուղղափառ Եկեղեցին միայն Ե. դարավերջի եւ Զ. դարի ընթացքում ասորիճանաբար սկսեց բաժանվել Ընդհանրական Եկեղեցուց, եւ այդ ժամանակաշրջանում Նուսրիհիանոս կայսեր կողմից Անտիոքի հակաբաղկեղծական պապրիարք Սեներիոսի գահընկեցության արդյունքում չէր, որ առանձին նվիրապետական համակարգ զարգացվեց: Այդ պահից սկսած՝ նրանց պապրիարքը (այսօր Անտիոքի հինգ պապրիարքներից մեկը) երբեք չի գահակալել Անտիոքում. ներկա պապրիարքը՝ Նորին Սրբություն Մար Իզնապիոս Յակոբ Գ.-ը Դամասկոսում է բնակվում: Ասորի Ուղղափառ Եկեղեցու համայնքները հիմնականում սփռված են Սիրիայում, Լիբանանում, Թուրքիայում (Թուր Արդինում՝ հարավարևելյան Թուրքիա, եւ Սրամբուլում), Իրաքում եւ Նոդկասարանում (Քերալա), մեծ սփյուռք գոյություն ունի նաեւ Արեւմտյան Եվրոպայում (Գերմանիա, Նոլանդիա, Շվեդիա) եւ Ամերիկա մայրցամաքում (Ամերիկայի ներկայիս Ասորի Ուղղափառ Եկեղեցու արքեպիսկոպոս Մար Աթանասիոս Յեշուե Սամուիլը -Քումրանի քարանձավներից գտնված Եսայո հայրնի ձեռագրի առաջին սեփականատերն է եղել: «Քումրանի Գանձը. Մեռյալ ծովի ձեռագրերի իմ պատմությունը» (Լոնդոն, 1968 թ.; Mar Athanasius Yeshue Samuel, *Treasure of Qumran: My Story of the Dead Sea Scrolls*, London, 1968) գրքից երևում է, որ նա իր կյանքում մեծ փող է հատկացրել այդ իրադարձությանը):

Ունիաթ Ասորի Կաթոլիկ Եկեղեցին, իր սեփական պապրիարքարանով (Բեյրութում), ԺԸ. դարի վերջում է միայն սկզբնավորվել:

Ի. դարը երկու մեծ գիտնական պապրիարքների՝ կաթոլիկ ասորի Եփրեմ Ռահմանու (Ephrem Rahmani, †1929 թ.) եւ ուղղափառ ասորի Եփրեմ Բարսոմի (Ephrem Barsom, †1957 թ.) գործունեության ժամանակաշրջանն էր:

3. Արեւելքի Եկեղեցի. Այս Եկեղեցին Սասանյան Կրթության սահմաններում է հիմնադրվել եւ վերջինիս պապմությունը միշտ առանձնացել է Նոմնեական կայսրության փարածքում գործած եկեղեցիների պապմությունից: Դա պայմանավորված էր երկու կայսրությունների քրիստոնյա բնակչության միջեւ եղած թույլ հաղորդակցությամբ. ասվածի լավագույն ապացույցն այն է, որ միայն 410 թ. Նիկիայի (325 թ.) Տիեզերաժողովը ճանաչվեց եւ պաշտոնապես ընդունվեց Արեւելքի Եկեղեցու կողմից: Նոմնեական կայսրությունում քրիստոնյաների նահապետության շրջանը գործնականում Կոստանդնուպոլսի Մեծի

կրոնափոխությամբ ավարտվեց, այնինչ՝ Պարսկաստանի քրիստոնյաները գրա-
դաշրական իշխանավորների կողմից իրենց հանդեպ գործադրվող հալածանք-
ների առաջին լուրջ ալիքը միայն Դ. դարի կեսերին զգացին: Հալածանքները
ժամանակ առ ժամանակ շարունակվեցին մինչև Է. դարը՝ Սասանյան արքայա-
նության կործանումը: Այս եկեղեցու պարամության աջքի զարնող ժամանակաշրջանն
Ասիայում իրականացված քարոզչական ակտիվ գործունեությանն է վերաբե-
րում: 635 թ. Արևելքի Եկեղեցու քարոզիչները նույնիսկ Չինաստան են հասել:
Այդ մասին մենք իմանում ենք քարե հուշարձանների վրա 781-ից պահպանված
ասորերեն-չինարեն երկլեզու արձանագրություններից: Դրանք հայտնաբերվել
են 1625 թ. Սիան-Ֆու բնակավայրում: Քարոզչական այդ գործունեության վե-
րաբերյալ այլ տեղեկություններ ԺԳ. դարի՝ Պեկինի վանական Ռաբբան Սաու-
մայի (Rabban Sawma) օրագրով են մեզ հասել: Վերջինս, որպես մոնղոլների
պարվիրակ, ճանապարհորդել է Եվրոպայում («Եվրոպայ Խանի Վանականնե-
րը. Ռաբբան Սաումայի պարամությունն ու ճանապարհորդությունները», անգլե-
րեն թարգմանությունը Ի. Ա. Վ. Բուդջի կողմից է կատարված, Լոնդոն, 1928 թ.;
English translation by E.A.W. Budge, *The Monks of Kublai Khan: The History and
Travels of Rabban Sawma*, London, 1928):

Չնայած եվրոպացի գրողներն այս Եկեղեցին անհարգալից կերպով «Նես-
տորական» են անվանում, այնուամենայնիվ, վերջինիս հարաբերակցությու-
նը Նեստորի հետ բավականին աննշան է. Չ. դարում են միայն Նեստորի որոշ
գրվածքներ ասորերեն թարգմանվել: Ըստ էության, վերոնշյալ եկեղեցու մեծա-
գույն աստվածաբան Բաբային (†628 թ.) զուգահեռ, Արևելքի Ասորական Եկե-
ղեցու աստվածաբանական ոգեշնչման հիմնական աղբյուրն ազգությամբ հույն
Թեոդորոս Մոպսուեստացու (†428 թ.) գրվածքներն են:

Պարբիարքի (կամ Կաթողիկոսի, ինչպես նրան առավել հաճախ են անվա-
նում) աթոռանիստը միշտ Սասանյանների ձմեռային մայրաքաղաք Սելեկիա-
Կրեսիփոնն է եղել: Վերջինս արարներին «երկվորյակ քաղաքներ» (ալ-Մա-
դաին) անվամբ է հայտնի եւ գտնվում է Բաղդադի հարավում: Վերջին հարյուր
տարիների նրանց պարամությունը ողբերգական բնույթ է կրել: Նրանց նախորդ
պարբիարք Մար Շիմանը փախուստի է դիմել Իրաքից եւ բնակվել է Ամերի-
կայում (այնպեղ նրանց նշանավոր գաղթօջախներից մեկն է գտնվում): Ներկա-
յիս պարբիարք Մար Դինիսան (օծվել է 1976 թ. հոկտեմբերի 17-ին Իլինգի Ս.
Բառնաբաս Եկեղեցում) ապրում է Թեհրանում, սակայն իր մշտական նստա-
վայր Բաղդադ տեղափոխվելու հույսն ունի: Նրա իրավասության փակ եղող
համայնքները գտնվում են Սիրիայում, Լիբանանում, Իրաքում, Իրանում, Հարա-
վային Հնդկաստանում (Քերալա), ինչպես նաև Ամերիկայում եւ Լոնդոնում:

Ունիաթ Քաղղեական Եկեղեցին 1550-ից է սկզբնավորվել. վերջինիս պարփարքի նստավայրը գտնվում է Բաղդադում:

4. Մարոնիք Եկեղեցի. Մարոնիքների, որպես առանձին եկեղեցու, ծագումն այդքան էլ պարզ չէ, չնայած նրանք, ակնհայտորեն, ինչ-որ կերպ է. դարավերջին եւ Ը. դարասկզբին ծավալված մոնոթեիստական (միակամյա վարդապետություն) եւ դիոթեիստական (երկկամյա վարդապետություն) վեճերի հետք են կապված: {33} Մարոնիք Եկեղեցին, խաչակրաց արշավանքների ժամանակաշրջանից սկսած, Նոմի Եկեղեցու հեղինակությունն է ընդունել, իսկ նրանց Երեմիա II պարքիարքը 1215 թ. Լաթերանի Դ. Ժողովին է մասնակցել: Մարոնիքների պարփարքի (Անտիոքի 5 Պարփարքություններից մեկն է. երկուսը ուղղափառ (Քաղկեդոնական) են, իսկ մյուսը՝ Ունիաթ Մելքիք) աթոռանիստն այժմ Բեյրութից դուրս է տեղակայված: Անցյալ դարում եւ դրանից հետո, հարկապես, Մարոնիք Եկեղեցու պարփարքարանը լիբանանյան քաղաքականության մեջ կարևոր դերակատարություն է ունեցել:

Լիբանանում, հենց Ջունիեից հարավ գտնվող Կասիկ քաղաքում է գտնվում նրանց «Սուրբ Նոգու» անվան համալսարանը, որտեղ հիմնականում, ասորագիտական ուսումնասիրություններին նվիրված «Արևելքի Խոսք» (*Parole de l'Orient*) արժեքավոր պարբերականն է հրատարակվում:

Եվրոպայում ասորագիտության զարգացման պարամության մեջ անուրանալի է մարոնիքների վաստակը (1584 թ. Նոմում իրենց քոլեջն են հիմնադրել): ԺԷ. դարում Փարիզի բազմալեզու Ասրվածաշնչում գերեզմանավորված ասորական տեքստերի խմբագրման հիմնական պարասխանատու մարոնիք Գաբրիել Սիոնիտան (*Gabriel Sionita*) էր, իսկ ԺԸ. դարում Ասսեսմանի ընտանիքն ասորագետների ուշագրավ հաջորդականությունն ապահովեց, որոնց ցուցակը Նովսեի Սիմոն Ասսեսմանին (*Joseph Simon Assemani*, †1768 թ.) էր գլխավորում. նրա «Արևելյան Գրադարան» (*Bibliotheca Orientalis*) երեքհատորյակը (1719-1728 թթ., Նոմ), որը Վապիկյանի գրադարանում պահվող գանձերի հիման վրա կադարված ասորական գրականության վերաբերյալ մի ուսումնասիրություն է ներկայացնում, ցայսօր ասորագիտության ոլորտում հույժ կարևոր ձեռքբերումներից մեկն է համարվում (լուստարիպ վերահրատարակությունը կատարվել է 1975 թ.):

Նավելյալ գրականություն. Արևելյան տարբեր եկեղեցիների վերաբերյալ վերջին հետազոտությունը Ա. Ս. Աթիյայի, «Արևելյան քրիստոնեության պարամություն», (*A History of Eastern Christianity*, London, 1968) կողմից է կատարվել: Արդի եկեղեցական խնդիրների վերաբերյալ հարուստ տեղեկություններ կան Դ. Էթթվոթերի, «Արևելքի Քրիստոնեական Եկեղեցիներ» աշխատության մեջ (*The Christian Churches of the East*, 2 volumes, London, 1968), իսկ Ռ.

Բ. Բեթթսի «Քրիստոնյաներն Արաբական Արևելքում» ուսումնասիրությունն (Christians in the Arab East, London, 1979) ավելի շատ ազգագրական և քաղաքական բնույթի հարցեր է դիտարկում:

Ի. դարի վերջում Ասորի Ուղղափառ Եկեղեցու պարամության ուսումնասիրման տեսանկյունից հարկապես հերաքրքիր տեսակետ է հայտնել Օ. Ն. Փերրին իր «Վեց ամիս ասորական վանքում» (Լոնդոն, 1895 թ.; Օ. H. Parry, Six Months in a Syrian Monastery, London, 1895) աշխատասիրության մեջ. հեղինակը հարավարևելյան Թուրքիայում՝ Թուր Աբդինի սահմանին գտնվող Դեիր Էզ Ջաֆարան (Deir ez Zafaran) վանքում է եղել (այդ ժամանակաշրջանի պարբիարքական նստավայրն էր):

Շնորհիվ Արևելքի Եկեղեցում իրականացված Անգլիկան կրթական առաքելությունների՝ այս Եկեղեցու և վերջինիս համայնքների մասին մի քանի ուշագրավ ուսումնասիրություններ են ի հայտ եկել, որոնցից կարելի է առանձնացնել հետևյալ հեղինակներին՝

ա) Ա. Ջ. Մաքլին և Վ. Ն. Բրաուն, «Արևելքի Կաթողիկոսն ու իր ժողովուրդը» (The Catholicos of the East and his People, London, 1892)

բ) Վ. Ա. Վիգրեն, «Ասորիներն ու նրանց հարևանները» (The Assyrians and their Neighbors, London, 1929)

գ) Գ. Փ. Բադգեր, «Նեստորականներն ու նրանց արարողակարգերը» (The Nestorians and their Rituals, two volumes, London, 1852). այս աշխատությունն իր տեսակի մեջ դասականներից մեկն է:

դ) Ջ. Ջոզեֆ, «Նեստորականներն ու նրանց մուսուլման հարևանները» (The Nestorians and their Muslim Neighbours, Princeton, 1961). վերջինս Արևելքի Եկեղեցու ԺԹ. և Ի. դարերի ողբերգական պարամության վերաբերյալ կարարված գիտական լավագույն հերազոտություններից մեկն է:

Անգլերենից թարգմանեց
ՅՈՒՐԿ ՍՐԿ. ՆԱՐՈՒԹ-ՅՈՒՆՅԱՆԸ

РЕЗЮМЕ

Основная цель перевода с английского труда профессора Себастиана Брока - дать нашему читателю хотя бы общее представление о сирологии и ее современных достижениях.

Профессор Брок долгие годы преподавал в институте Востоковедения Оксфордского университета, заслужив известность как один из лучших и наиболее знающих сирологов второй половины XX века. Основная сфера его интересов включает публикацию и перевод различных сирийских первоисточников, освещение греко-сирийских литературных и культурных взаимоотношений и пр. Предлагаемая работа, как уже отмечено в предисловии, - краткое введение в сирологию. Она предназначена для студентов и специалистов, занимающихся как сирологией, так и общегуманитарными дисциплинами.

SUMMARY

The main aim of the translation of this work by Prof. Sebastian Brock is to give some idea to our readers on Syriac studies and its current achievements.

Prof. Brock for many years lectured in the Institute of Oriental studies of the Oxford University and became one of the most practiced and most competent Assyriologists of the 20th century. Main spheres of his studies included the publication and translation of different Syriac original texts, coverage of the Greek-Assyrian literary-cultural relations, etc. This work, as mentioned in the preface, is a brief introduction dedicated to the Syriac studies and is destined for specialists and students dealing with Syriac studies and humanities in general.